

## ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 97-ԱՄԵԱԿԸ ՈԳԵԿՈՉՈՒԵՑԱԲ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ ՍԷՋ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՐՆԵՐԸ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԱՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԻՇՏԻՆ

Երեւանէն-Իսթանպուլ, Փարիզէն-Լոս Անճելըս ու մինչեւ հնդկաստան, Հայ ժողովուրդն ու հայութեան արդար դատին հաւատացողները ոգեկոչեցին արդի ժամանակներու առաջին ցեղասպանութեան՝ Հայկական ցեղասպանութեան 97-րդ տարելիցը:

Քաղաքէ-քաղաք ու երկիրէ-երկիր տեղի ունեցան քայլարշաւներ, բողոքի ցույցեր, հանրահաւաքներ ու եկեղեցական արարողութիւններ, յիշեցնելով աշխարհի պետութիւններուն ու ժողովուրդներուն, որ Հայութիւնը հաստատ քայլերով կ'ուղղուի դէպի 100-ամեակ ու բոլորը պարտաւոր են, մինչ այդ ճշդելու իրենց դիրքը եւ կանգնելու պատմութեան ճիշդ կողմը, ըլլալու արդարութեան հետ ու ճանչնալու Հայոց ցեղասպանութիւնը:

Հայոց մայրաքաղաք Երեւանի մէջ, Ապրիլ 24-ի առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ, հազարաւոր հայորդիներ այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ յարգանքի տուրք մատուցելու 1915-ի երիտթուրքերու կողմէ իրագործուած Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Կէսօրուայ մօտ Ծիծեռնակաբերդ այցելեց նախագահ Սերժ Սարգսեան ու ծաղկեպսակ դրաւ ցեղասպանութեան զոհերու յուշահամալիրին: Երկիր նախագահին կ'ուղեկցէին Ազգային ժողովի նախագահը, վարչապետը, Ամենայն հայոց կաթողիկոսը եւ բարձրաստիճան պաշտօնեաներ:

Վեհափառ Հայրապետը ի յիշատակ ցեղասպանութեան զոհերուն, Անմար կրակի մօտ հոգեհանգստեան կարգ կատարեց:

Օրուայ տարբեր ժամերուն Ծիծեռնակաբերդի յուշահամալիր այցելեցին ու ծաղկեպսակներ դրին Հայաստանի քաղաքական ուժերու ու հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Ընտրութիւններուն մասնակցող կուսակցութիւններն ու անհատ քաղաքական գործիչները մէկ օրուայ համար դադար առին ընտրարշաւի աշխատանքներէն:

Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա, Ապրիլ 24-ի առթիւ հրապարակած իր խօսքին մէջ դարձեալ չօգտագործեց «ցեղասպանութիւն» բառը ու բաւարարուեցաւ «Մեծ Եղեռն» եզրով:

Օր մը առաջ, Միացեալ Նահանգներու Հոլոքոստի թանգարանին մէջ իր ունեցած «Այլեւս երբեք» ելույթի ընթացքին, նախագահ Պարաք Օպամա յիշատակեց քանի մը ցեղասպանութիւններ, Հոլոքոսթը նկատելով մարդկային «բարբարոսութիւններու գագաթնակէտը», սա-



24 Ապրիլ, 2012 - ին հայրադրիներ կը խոնարհին Ծիծեռնակաբերդի Անմար կրակին առջեւ:

կայն Հայոց ցեղասպանութեան մասին ոչ մէկ յիշատակում կատարեց: Այս կապակցութեամբ, ամերիկեան «Wall Street Journal» կարեւոր թերթը քննադատելով Օպամային գրեց, որ Ամերիկեան արժանի է առաջնորդի մը, ով ճշմարտութիւնը կ'ըսէ հայերու ցեղասպանութեան մասին: Ըստ թերթին, նախագահը չորրորդ տարին է որ, կը դրժէ իր տուած խոստումը եւ կը հրաժարի օգտագործել «ցեղասպանութիւն» բառը:

«Օպաման առաջին նախագահն է, որ կը նահանջէ թուրքերու առջեւ՝ «ցեղասպանութիւն» բառի հարցով, սակայն քիչերէն մէկն է, որ անկեղծաբար կը խօսէր այդ մասին, նախագահ դառնալէն առաջ»,

Շաբ.ը էջ 10

### «ԿԱՅԾ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԱՐՇԱԲԻՆ ՈՒ ՀՍԿՈՒՄԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՍԷՋ



Փաստինայի եւ շրջակայքի հայութեան համար այս տարի Մեծ Եղեռնի 97րդ տարեդարձը նշուեցաւ իւրայատուկ ձեւով: Արդարեւ, առաջին անգամ ըլլալով Ապրիլի 23ի երեկոյեան, տեղի ունեցաւ մոմերով քայլարշաւ կազմակերպութեամբ Ս.Դ.Հ.Կ. «Կայծ» երիտասարդաց միութեան:

Խաղաղ երթն սկսաւ Փասատինայի քաղաքապետարանի

առջեւէն, երեկոյեան ժամը 800:ին: Քայլարշաւի մասնակից բազմահարիւր հայորդիներու մէջ կային ամէն հասակի եւ տարիքի տարիքի հայրենակիցներ եւ նոյնիսկ օտարներ որոնք մեծ կարգապահութեամբ իրենց խաղաղ երթը շարունակեցին Գոլոբրատո պողոտայի վրայ՝ ցեղասպանութիւնը

Շաբ.ը էջ 10

### ՀՆՉԱԿԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅՈՒՇԱՐՁԱՆ



Երեքշաբթի Ապրիլի 24ին, կէսօրէ ետք Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան վարիչ Մարմինը, յարակից կառույցները եւ «Կայծ» երիտասարդական Միութեան անդամները իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Եղեռնի անմեղ զոհերուն յիշատակին, Մոնթեպելլոյի Նահատակներու Յուշարձանին առջեւ՝ ծաղկեպսակի զետեղումով եւ տեղույն հոգեհանգստեան աղօթքներով:

Զգացական էր պահը մանաւանդ «Կայծ»ի երիտասարդներուն համար, որոնք մէկ օր առաջ Փասատինայի մէջ կազմակերպած իրենց քայլարշաւէն ետք կը ներկայանային Նահատակներու Յուշարձանին՝ լիարժէք կերպով յայտնելու իրենց սէրը եւ յարգանքը մեր անմահ մարտիրոսներուն:



**ՀԱՅԱՍՏԱՆ**

**ՀԱԿ-Ն ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է 30-ՎԱՅՐԿԵԱՆԱՆՈՑ ԵՐԿՐԱՓՈՒՏՈՒԹԻՒՆ**

Ապրիլ 20-ին Ազատութեան հրապարակում տեղի ունեցաւ ՀԱԿ հանրահաւաքը, որը սկսուեց կէս ժամ ուշացումով: Պարզուեց՝ հանրահաւաքի անցկացման պահին հոսանք չկայ: Արամ Մանուկեանը նկատեց, որ միջադէպը իրենց հանրահաւաքը հերթական անգամ խոչընդոտելու փորձ է:



ՀԱԿ-ի հանրահաւաքի Օփիքայի առջև

Բայց իրականում Ազատութեան հրապարակում ընթանում էին խտալացի երգիչ Անդրէաս Բոչելլիի համերգի նախապատրաստական աշխատանքները:

Իր ելույթում Ա. Մանուկեանն անդրադարձաւ ՀԱԿ-ի անցկացրած քարոզարշաւին՝ նշելով, որ իրենք արդէն 5 մարդ են այցելել: Մարգերոմ եղել են բազմաթիւ խոչընդոտներ, ճակատագրական, ամէն ինչ արուել է, որ մարդիկ չմասնակցեն իրենց հանրահաւաքներին:

- Էջմիածնում էն Վարդգէս Գևորգիանը, որոնք անուն են, հպարտութիւն, ազգի պարծանք, ամէն կերպ արգելել էին մարդկանց մուտքը հրապարակ: Ըստ իշխանութիւնների՝ Հայաստանի թիւ մէկ հակառակորդը ՀԱԿ-ն է, ուստի նրանք իրենց մարդկային եւ վարչական ռեսուրսներն ուղղում են մեր դէմ, ամէն ինչ անում են, որ ՀԱԿ-ը միտինգ չանի, - ասաց Ա. Մանուկեանը:

Թիւ 7 ընտրատարածքի մեծամասնական թեկնածու, ՀԱԿ անդամ, «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինեանը եւս մէկ անգամ հանդէս եկաւ 30-վայրկեանոց յեղափոխութեան մասին ուղերձով: Ն. Փաշինեանի խօսքով՝ ՀԱԿ-ը չի ակնկալում, որ ժողովուրդն ակտիւօրէն կը

մասնակցի իր հանրահաւաքներին, կը քարոզի ՀԱԿ-ի օգտին կամ ճակատամարտ կը տաչ բեսպրեդելի եւ օլիգարխիայի դէմ, ՀԱԿ-ն ակնկալում է ընդամէնը 30 վայրկեան:

- Մայիսի 6-ին տնից դուրս գալով եւ հանդիպելով ձեր գործատուին կամ թաղային հեղինակութեանը՝ ժպտացէք Սերժիկի կողքին, հանրապետականի հայեացքը ընդունէք, բայց երբ վերցնէք քուէթերթիլը, այդ պահից իսկ կը մեկնարկի մեր 30-վայրկեանանոց յեղափոխութիւնը: Կը քուէարկէք ՀԱԿ-ի օգտին, ու կը կայանայ եւ կը յաղթանակի ձեր փակ յեղափոխութիւնը, հենց դրանով ճանապարհ կը բացուի գաղթած հարազատները վերադարձի, Մարտի 1-ի դէպքերի բացայայտման եւ այլնի համար, - ասաց Ն. Փաշինեանը:


ՀԱԿ անդամը ժողովրդին վստահեցրեց, որ սուտ են յայտարարութիւններն այն մասին, թէ ստուգուելու է՝ ով ում օգտին է քուէարկել:

-...Քուէարկութիւնն անցնելու է փակ եւ տեղական ու միջազգային դիտորդների հսկողութեան ներքոյ: Ընդամէնը 30 վայրկեան, եւ Մայիսի 7-ին մենք կ'իմանանք, որ տապալուել է լքիկատերական վարչախումբը:

**ՍԵՐՑ ՍԱՐԳՍԵԱՆ. ԺԱՄԱՆԱԿՆ Է ՓՈՒՍԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԹՆՈՒՈՐՏԸ**

Հանրապետական կուսակցութեան (ՀԿԿ) դեկավար ՍերՑ Սարգսեանը շարունակում է միայնակ իրականացրել ՀԿԿ-ի նախընտրական քարոզարշաւը:

Երեւանի Նոր Նորք համայնքում իր կարճատեւ ելույթում ՍերՑ Սարգսեանը խօսեց քաղաքական կեանքի միջնուրտը փոխելու անհրաժեշտութեան մասին՝ նշելով, որ ՀԿԿ-ի բազմաթիւ քայլեր միամականութեան խորհուրդ են ունեցել, եւ իրենց յաջողուել է հապէս մեղմել քաղաքական պառակտումներին ու անհանդուրժողականութեան դրսեւորումները երկրում:



ՍերՑ Սարգսեանի այդպէս կ'ունենայ ՀԿԿ-ի կարգախօս՝ «Հաւատանքով դր փոխենք»-ի առջև

«Մենք ասում ենք՝ վաղուց արդէն ժամանակն է անընդհատ փոխել մեր քաղաքական կեանքի միջնուրտը: Անձամբ ես եւ ողջ Հանրապետական կուսակցութիւնը արել ենք ամէն ինչ, որպէսզի Հայաստանում հաստատուի նոր, իսկապէս դրական միջնուրտ եւ շարունակելու ենք: Մենք արել ենք հնարաւորը, որպէսզի մեր երկրում հաստատուի համաձայնութեան քաղաքական մշակույթ», - ասաց նա:

Սարգսեանն ասաց, թէ արել են ամէն ինչ, որպէսզի քաղաքական կեանքում ներգրաւուեն հանրութեան բոլոր խաւերին: «Հանրապետականը շատ լաւ գիտի՝ ընտրութիւնների ժամանակ քուէների մեծ թիւ ստանալը մեծամտելու իրաւունք չի տալիս, ուրիշներին մերժելու կամ անտեսելու իրաւունք չի տալիս», - ասաց երկրի ղեկավարը՝ ընդգծելով, որ

շարունակելու են հաւատարիմ մնալ իրենց այդ քաղաքականութեանը:

«Մենք շարունակելու ենք համագործակցութեան կամուրջները կառուցել, համաձայնութեան եզրեր փնտռել ու գտնել՝ ներգրաւելով բոլոր շահագրգիռ կողմերին: Թող թերահաւատները նայեն Հանրապետականին եւ տեսնեն, որ մենք ենք այն առաջատար քաղաքական ուժը, որը ներգրաւել է մտաւորականների, երիտասարդների, կանանց: Թող թերահաւատները նայեն Հանրապետականին եւ տեսնեն, որ մենք բաց ենք եղել նաեւ անկուսակցական եւ այլ կուսակցութիւնների ներկայացուցիչների հետ համագործակցելու», - ասաց նախագահը:

Սարգսեանը նաեւ նշեց, որ եկել է սեփական թերութիւնները յաղթահարելու ժամանակը՝ ընդգծելով, որ սեփական թերութիւնը շատ աւելի բարդ հակառակորդ է, քան արտաքին թշնամին:

Իր ելույթի վերջում ՀԿԿ-ի ղեկավարը, Նոր Նորքի բնակիչներին դիմելով, երկու բան խնդրեց՝ քուէարկել ՀԿԿ-ի օգտին եւ լաւ ընտրութիւններ անցկացնել:

**«ԺԱՌԱՆՎՈՒԹԻՒՆ»-Ը ՊԱՏՐԱՍՏ Է ՆԱԾԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ**

«Եթէ իշխանութիւնը ազատ եւ արդար ընտրութիւններ չանցկացնի, «Ժառանգութիւն»-ը պատրաստ է նաեւ ապստամբութեան», - լրագրողների հետ հանդիպմանը չորեքշաբթի օրը յայտարարեց կուսակցութեան ղեկավար անդամ Զարուհի Փոստանջեանը:

«Դրա բոլոր նախադրեալները կան: Մենք չունենք այլեւս ժամանակ՝ տարիներ, որպէսզի եւս հինգ տարի սպասենք, որպէսզի Հայաստանը ամբողջովին դատարկուի», - լաւելեց պատասխանորդը:

Հարցին, թե ինչպէս է պատկերացնում այդ ապստամբութիւնը, Փոստանջեանն արձագանքեց. - «Ապստամբութիւնը երբ գալիս է, ոչ ոք չի կարող ասել, թե ինչպէս է պատկերացնում: Նա ինքն իրեն լինելու է»:

ուում. - «Կեղծ բարեգործութեան անուան տակ ցուցակների առաջին համարում գտնուող անձինք, լիդերները, ըստ էութեան, բաժանում են ընտրակաշաւը: Տրակտորների բաժանումը, մուրաբանների բաժանումը, հանրային տարածքների օգտագործումը՝ հիմնականում Հանրապետական կուսակցութեան դրօշակներն են այդ հանրային տարածքներում փակցուած, նրանց պատասխաններն են, նրանց զրահանակներն են: Սրանք բոլորը ընտրախախտումներ են»:

Անդրադառնալով ընտրարշաւի անցած 18 օրերի ընթացքում «Ժառանգութեան» նախընտրական հանդիպումներին՝ պատգամաւորն ասաց, թե, իր տպաւորութեամբ, մարդկանց մտահոգութիւնները, 2007 թուականի համեմատութեամբ, կրկնապատկուել են:

Նրա փոխանցմամբ, քարոզարշաւի ընթացքում «Ժառանգութեան» ներկայացուցիչները բազմաթիւ ընտրախախտումներ են արձանագրել՝ ընտրակաշաւի բաժանում, վարչական ռեսուրսի օգտագործում, բռնութեան կիրա-

ւում. «Կեղծ բարեգործութեան անուան տակ ցուցակների առաջին համարում գտնուող անձինք, լիդերները, ըստ էութեան, բաժանում են ընտրակաշաւը: Տրակտորների բաժանումը, մուրաբանների բաժանումը, հանրային տարածքների օգտագործումը՝ հիմնականում Հանրապետական կուսակցութեան դրօշակներն են այդ հանրային տարածքներում փակցուած, նրանց պատասխաններն են, նրանց զրահանակներն են: Սրանք բոլորը ընտրախախտումներ են»:

Սակայն լաւ ընտրութիւններ անցկացնելու ամենամեծ խոչընդոտը Փոստանջեանը համարում է ընտրացուցակներում առկայ մեծաթիւ անճշգրտութիւնները. - «Եթէ կեղծիքների համատարած գործընթացը սկսուի, ապա դա տեղի է ունենալու հենց այդ ցուցակների միջոցով: Հենց այնպէս չէր, որ [ընտրական] օրէնսգիրքը ընդունելիս մեր առաջարկը մերժուեց՝ հրապարակել բոլոր այն մարդկանց ցուցակները, ովքեր մասնակցել են ընտրութիւններին: Ոստիկանութիւնն այդքան շահագրգիռ չէ եւ եթէ շահագրգիռ լինէր, ապա ժամանակին այնպիսի ցուցակներ կը ներկայացնէր, որ այդ ցուցակներն իրապէս մաքուր կը լինէին, գոնէ հնարաւորինս մօտ մաքուրին կը լինէին»:

**ԵՐԵՒԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԲ ԱՆԴՐԵԱ ԲՈՉԵԼԻ Ի ՀԱՍԵՐԳԸ**

Երեւանի Ազատութեան հրապարակում ապրիլի 22-ին տեղի ունեցաւ աշխարհահռչակ տենոր Անդրէաս Բոչելլիի համերգը: Ինչպէս հաղորդում է NEWS.am-ը, համերգը տեւեց 1,5 ժամ: Հանրայնացրտ երգիչը կատարեց յայտնի արիաներ խտալական օպերաներից: Բաց երկնքի տակ կազմակերպուած համերգին ներկայ էին Հայաստանի նախագահ ՍերՑ Սարգսեանը, հայ գրատպութեան 500-



Ազատութեան հրապարակի վրայ այդպէս կ'ունենայ Անդրէաս Բոչելլի

ամեակի եւ «Երեւանը 2012թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի մեկնարկի կապակցութեամբ Հայաստան ժամանած օտարերկրեաց պատուիրակութիւնների ղեկավարները, բարձրաստիճան պաշտօնատար անձինք:

Հանրայնացրտ երգչին կենդանի լսելու համար հրապարակում ունկնդիրները մեծ բանակ էր հաւաքուել, այդ թւում՝ օտարերկրացիներ: Հաւաքուածները շատ ջերմ էին արձագանքում Բոչելլիի իւրաքանչիւր կատարման՝ դրանք ըն-

դունելով բոլորն ծափահարութիւններով:

Աւարտին Բոչելլի կատարել է Էլվիս Փրեսլիի I Can't Help Falling In Love With You, ինչպէս նաեւ իր հանրայնացրտ՝ Time to say goodbye երգերը:

Բոչելլիին նուազակցել է Հայաստանի ֆիլհարմոնիկ նուազախումբը եւ «Հովիթ» երգչախումբը: Հրապարակի երկու կողմերում եւ բեմի ետեւում տեղադրուած էր երեք մեծ էկրան, որոնցով հեռարձակում էր համերգը:

**ԼՈՒՐԵՐ**

**ԹՈՒՐԲԻԱՅԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՐԸ ՑԱՆԿԱՑԵԼ Է  
ԼՈՒԾԵԼ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ  
ՎԱՆՈՒՄ ՉԱՅԵՐԻՆ ՅՈՂ ՑԱՏԿԱՑՆԵԼ**

Թուրքիայի նախկին նախագահ, 1993-ին կասկածելի պայմաններում մահացած Թուրքոլթ Օզալը ժամանակին փորձ է արել լուծել Հայոց ցեղասպանության խնդիրը: Այս մասին թուրքական Aksiyon-ին պատմել են ժամանակին Թուրքոլթ Օզալի հետ աշխատած պետական պաշտոնեաները:



Թուրքիայի նախկին նախագահ, Թուրքոլթ Օզալ

ամէն անգամ ԱՄՆ այցելելու ժամանակ հանդիպել է Հայկական սփիւռքի ազդեցիկ ներկայացուցիչների հետ, ուշադիր լսել եւ նրանց հրաւիրել Թուրքիա: 1991-ին մի նման հանդիպումից յետոյ Օզալը կիսուել է թուրք պաշտօնեաների հետ. «Նրանք ուզում են, որ մենք ճանաչենք Ցեղասպանութիւնը: Եթէ ճանաչենք, ինչքա՞ն է լինելու դրա դիրքը»: Օզալը շատ է ցանկացել, որ այս հարցերը հասարակութեան մէջ բարձրացուէին եւ քննարկուէին:

Նշում է, որ Օզալը Սփիւռքի հայերի հետ յարաբերութիւնները կարգաւորելու համար ցանկացել է վանում հայերին անվճար հող յատկացնել, սակայն այդ նախաձեռնութիւնը եւս խիստ բացասաբար է ընդունուել եւ այն առաջ չի գնացել:

Նշենք, որ Թուրքիայի 8-րդ նախագահ Թուրքոլթ Օզալը 1993-ին կասկածելի պայմաններում է մահացել: Նրա կինը պնդում է, որ իր ամուսնուն թունաւորելով են սպաննել:

**ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՉԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՉԱՄԱՐ  
ԻՐԱՐ ԵՆ ԾԵԾԵԼ**

Ապրիլ 24-ին Վրաստանի խորհրդարանի լիազուժար նիստի ընթացքում ընդդիմադիր կուսակցութեան առաջնորդ Ջոնդի Բագատուրիան բարձրացրել է Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը:



Ծեծկոտուի վրաստանի խորհրդարանէն մերս՝ Հայկական ցեղասպանութեան հարցով

Ի ն չ պ է ս յայտնում են վրացական լրատուամիջոցները, Բագատուրիան նշել է. «Ձեր քննարկման ժամանակ ես ասել էի, որ մենք չպէտք է բարձրացնենք այդ հարցը, քանի որ դրան կը յաջորդի հայկական հարցը: Իսկ ինչ պէտք է մենք ասենք մեր եղբայր հայերին, ովքեր հանդիսանում են մեր հայրենակիցները»:

Բագատուրիայի ելույթի ժամանակ ադրբեջանական ծագում ունեցող պատգամաւոր Ազեր Սուլէյմանովը մտնեցել է ամբիոնին եւ ինչ-որ բան շարտել Բագատուրիայի վրայ: Ի պատասխան Բագատուրիան Սուլէյմանովի վրայ գրիչն է շարտել, ապա սկսել է ծեծկոտուքը: Ծեծկոտուքից յետոյ Սուլէյ-

մանովը Բագատուրիային անուանել է «հայ պատգամաւոր», ինչից յետոյ նրա բարձրախօսն անջատել են:

Ինչպէս տեղեկացնում են ադրբեջանական կայքերը, պատգամաւոր Սուլէյմանովը Բագատուրիայի վրայ նետել էր վագելիների փաթեթ:

Խորհրդարանի նախագահ Դավիթ Բակրաձեն խղաղեցրել է պատգամաւորներին եւ պահանջել վերջ տալ ցեղասպանութեան մասին բոլոր քննարկումներին, քանր որ «դա շատ ցաւոտ թէմա է եւ դրա քննարկումը կարող է ազդել հարեւանների հետ Վրաստանի յարաբերութիւնների վրայ»:

**ՉԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՇԵՇՏՈՂ  
ԾԱՂՐԱՆԿԱՐ՝ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ**



Ֆրանսիայի Մոնբելյար քաղաքի Անատոլ Ֆրանս վարժարանում աշակերտներին ցուցադրուել է «Ինչո՞ւ Թուրքիան չի կարող մտնել Եւրամիութիւն» մակագրութեամբ ծաղրանկար, որտեղ շեշտուում է, որ Թուրքիան հայերի դէմ ցեղասպանութիւն է իրականացրել:

Hurriyet Daily News-ի փոխանցմամբ՝ նկարում պատկերուած է լեռ, որի գագաթին ծածանուում է Եւրամիութեան դրոշմը, իսկ Թուրքիան ներկայացուած է որպէս լեռան ստորոտին բեռի տակ կքած եւ լեռը բարձրացողներից ետ մնացող մի մարդ. բեռը իրենից ներկայացնում է գանգերով լի մի պարկ, որի վերեւում գրուած է «Հայոց ցեղասպանութիւն», իսկ վրան՝ «Թուրքիա»:

Ֆրանսիական վարժարանի ազգութեամբ թուրք երկու աշակերտներ ծաղրանկարի մասին հարցր-

դել են իրենց ընտանիքներին:

Թուրք պատանիներից մէկը յետոյ պատմել է, թէ ուսուցչին իր դիտողութիւնն է փոխանցել՝ «մենք ցեղասպանութիւն չենք կատարել, բայց դուք մեզ մեղադրում էք դրանում», ինչին ուսուցչը պատասխանել է, որ ծաղրանկարը ցուցադրում է ոչ իր նախաձեռնութեամբ՝ դա ընդգրկուած է ուսումնական ծրագրում:

Թուրք աշակերտը ասել է, թէ նկարից հասկացել է, որ Ֆրանսիան չի ցանկանում Թուրքիան տեսնել Եւրամիութիւնում:

Թուրք պատանիների ծնողները փաստի մասին իրազեկել են ուսիցմի դէմ պայքարի մի հիմնադրամի, որի թուրք նախագահը խոստացել է Ֆրանսիայի կրթութեան նախարարութեանը դիմել ծաղրանկարը կրթական ծրագրից հանելու պահանջով:

**ԹՈՒՐԲ ԲԱՂԱՔԱԳԵՏ. «ԹՈՒՐԲԵՐԸ ՊԱՐԶԱՊԵՍ  
ՎԱԽԵՆՈՒՄ ԵՆ ԾԱՆԱՉԵԼ ՉԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ»**

1915թ. իրադարձութիւնների շուրջ նոր քննարկումներն առաջին հերթին անհրաժեշտ են այսօրուայ թուրքական հանրութեանը: Այդ մասին «Ամերիկայի Չայնին» տուած հարցազրոյցում ասել է թուրք քաղաքագէտ, Վաչինգտոնի Ջոնս Հոփկինսի անուան համալսարանի պրոֆեսոր Օմեր Թասպինարը: Նրա կարծիքով՝ թուրքերն առաւել բաց կը դառնան Հայաստանի եւ հայերի մասին բանավէճում, երբ Թուրքիան յաղթահարի ներկայիս պատկերացումները, թէ բոլորը, ովքեր ապրում են Թուրքիայում, թուրքեր են:

Բացի այդ, պրոֆեսորի կարծիքով, ժամանակակից Թուրքիայի բնակչութիւնը պէտք է հասկանայ, որ համընդհանուր ձուլման նախագիծը ձախողուել է, որ Թուրքիայում կան փոքրամասնութիւններ, եւ այդ փաստի ճանաչումը սեպարատիզմի խրախուսում չի նշանակում:

Խօսելով Թուրքիայի կողմից 1915թ. իրադարձութիւնները ցեղասպանութիւն անուանել հրաժարուելուց, քաղաքագէտը նշեց, որ այդ դէպքում ոչ պակաս դեր ունի վախը: «Շատերը վախենում են, որ ցեղասպանութեան ճանաչումը միայն առաջին քայլը կը դառնայ, որին կը հետեւեն մի շարք պահանջներ՝ ինչպէս տնտեսական, այնպէս էլ տարածքային», - ամփոփեց նա:

**ՎԱԽՃԱՆԱԾ Է ԼՐԱԳՐՈՂ ԱՐՄԵՆ ՏԻԼԱՆԵԱՆ**

Կլէնտէլի մէջ Ապրիլ 24-ին 57-րդ տարեկանին սրտի կաթուածով վախճանած է «Ազատութիւն» ռատիոկայանի երկարամեայ լրագրող Արմէն Տիլանեան:



Միւնխիխի, իսկ 1995-2006 թուականներուն՝ Պրահայի կեդրոնակա-

Ինչպէս կը տեղեկացնէ ռատիոկայանը, լրագրող Արմէն Տիլանեան եղած է «Ազատութիւն» ռատիոկայանի երեւանեան գրասենեակի հիմնադիրներէն, գրասենեակին մէջ աշխատած է 1992-94 թուականներուն: Ան վարած է «Ազատութիւն» ռատիոկայանի առաջին հարցազրոյցները՝ նորանկախ Հայաստանի մէջ տեղի ունեցող ամենաառանցքային իրադարձութիւններուն վերաբերեալ:

1994-1995 թուականներուն Արմէն Տիլանեան աշխատած է «Ազատութիւն» ռատիոկայանի

յանին մէջ: Միացեալ Նահանգներ մեկնելէն ետք յայտնի լրագրողը աշխա-

տակցած է այտեղի հայկական լրատուամիջոցներուն՝ նպաստելով անոնց զարգացման:

### ԹՈՒՐԲՈՅ ՄԷՋ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐԸ ԿՈՉ ԸՐԱԾ ԵՆ ԵՎԼԱՆԻ ԿԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ



Թրքական իսլամական ստեղծագործություններու քանդարանին առջև հաւաքուած ժողովուրդը պահանջած է Հայկական Ցեղասպանութեան մանաչու մը



Ցուցարարներու առջև ելոյթ կ'ունենայ պատմաբան Արա Սանճեան

Թուրքիոյ «Մարդու իրաւունքներու կազմակերպութիւնը» Պոլսոյ մէջ ցոյց կազմակերպած է՝ պահանջելով ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը:

Թրքական իսլամական ստեղծագործութիւններու թանգարանին առջեւ տեղի ունեցած ցոյցին վայրը պատահական չէր ընտրուած. Օսմանեան կայսրութեան տարիներուն թանգարանի կառուցը բանտ եղած է: Նոյն այստեղ էր, որ Հայ մտաւորականները աքսորելու վճիռը կայացուած է:

Հաւաքուած ցուցարարները պարզած են պատահական, որոնց վրայ գրուած էր՝ «1915-ը ցեղասպանութիւնն էր», «Ցեղասպանութիւնը մարդկութեան դէմ յանցանք է» եւ այլն:

«Մարդու իրաւունքներու կազմակերպութեան» անդամ Մերալ Չըլսըրը ընթերցած է Ամենայն Հայոց եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ուղղուած նամակ մը, ուր ըստուած է թէ Ցեղասպանութեան եւ ստեղծագործութեան որպէս արդիւնք, Հայ եկեղեցւոյ պատկանող կալուածները բռնագրաւուած են եւ պէտք է այժմ վերադարձուին իրենց տէրերուն:

Ելոյթ ունեցած է նաեւ Անգլ-

իա բնակող պատմաբան Արա Սանճեան:

Ցուցարարները ապա քայլաբար կատարած են դէպի նամակատուն, յանձնելու համար Կաթողիկոսներուն ուղղուած նամակները:

Աւելի ուշ, Պոլսոյ Թաքսիմ հրապարակին վրայ տեղի ունեցած է Ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած ձեռնարկ մը, որուն մասնակցած է մօտ 5000 մարդ:

Ցուցապատուներուն վրայ թրքերէն, հայերէն, քրտերէն եւ անգլերէն լեզուներով գրուած է՝ «Այս ցաւը բոլորիս է»:

Ձեռնարկին մասնակցած են նաեւ Հրանդ Տինքի կինը՝ Ռաքէլ Տինք, նաեւ՝ պատգամաւորներ, յայտնի լրագրողներ, դասախօսներ, արուեստագէտներ ու մտաւորականներ:

«Ժողովրդի Փրկութիւն» կուսակցութեան անդամ, մօտ 30 երիտասարդներ փորձած են խանդարել ցոյցը եւ ցեղապաշտական բացականչութիւններով փորձած են սադրել հաւաքուածները:

Ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած ձեռնարկներ տեղի ունեցած են նաեւ Անգարայի, Իզմիրի եւ Պոտրում քաղաքներուն մէջ:

### ՆԱԽԱԳԱՅ ՕՊԱՄԱՆ ԴԱՐՁԵԱԼ ԳՈՐԾԱԾԵՑ «ՄԵԾ ԵՂԵՈՆ» ԵԶՐԸ

Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա Ապրիլ 24-ի առթիւ իր տարեկան խօսքին մէջ դարձեալ չօգտագործեց «ցեղասպանութիւն» բառը՝ փոխարէնը ըսելով «Մեծ եղեռն»:

Ստորեւ՝ նախագահ Օպամայի ելոյթը ամբողջութեամբ. «20-րդ դարու ամենացաւալի իրադարձութիւններէն մէկը հանդիսացող Մեծ եղեռնը կը յիշենք եւ Օսմանեան կայսրութեան մէջ դաժանաբար սպանուած 1,5 միլիոն հայերուն յիշատակը: Մենք կը միանանք այն միլիոնաւոր մարդոց, որոնք այսօր կը յիշեն 97 տարի առաջ տեղի ունեցած աննկարագրելի դէպքերը: Մեր քայլերը ուղղուած պիտի ըլլան նման իրադարձութիւններու կանխման:

«1915-ին տեղի ունեցածներուն վերաբերեալ իմ տեսակէտներս յայտնած եմ: Իմ տեսակէտս այս հարցին առնչութեամբ չէ փոխուած: Իրականութիւնը ամբողջական, անկեղծ եւ արդար ճանապարհով ընդունիլը բոլորիս համար օգտակար պիտի ըլլայ: Դէպի ապագայ տեղաշարժ չ'ըլլար, քանի դեռ անցեալին հետ հաշիւները չեն պարզուած: ԱՄՆ-ի պատմութեան մէջ նման երեւոյթներ շատ անգամներ եղած են եւ կը հաւատամ, որ մենք, այդ պատճառաւ աւելի ուժեղ դարձած ենք: Որոշ կազմակերպութիւններ ապագային ուղղուած համարձակ քայլեր արդէն ձեռնարկած են:



Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա

Կ'ողջունեմ այդ ճանապարհը ընտրած հայերն ու թուրքերը:

«Ամերիկահայերը տարբեր ոլորտներու մէջ նպաստած են Հայաստանի ժողովրդավարացման, զարգացման համար շատ կարեւոր ներդրում ունեցած են: ԱՄՆ-ին ձգած ձեր ժառանգութեամբ՝ կը հպարտանանք եւ ձեզի հետ միասին կը յարգենք մօտ մէկ դար առաջ շարժարուած, ցաւ ապրած եւ սպանուածներուն յիշատակը: Կը յիշենք Մեծ եղեռնը եւ կը յայտարարեմ, որ հայ ժողովուրդին համար աւելի փայլուն ապագայ ստեղծելու համար պատրաստ ենք կանգնիլ բոլոր հայերու կողքին»:

### ՄԵԾ ԵՂԵՈՆԻ 97ՐԴ ՏԱՐԵԴԱՐՉ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՈՋԵՒ

Ապրիլի 24ին առաւօտեան ժամը 10:00ին տեղի ունեցաւ Մեծ եղեռնի 97րդ տարեդարձի տպաւորիչ յուշահանդէս մը Փասատինայի Քաղաքապետարանի գլխաւոր մուտքին առջեւ: Ներկայ էին հայ երեք յարանոցաւորներ եւ Գրեյս Ներկայացուցիչները, քաղաքապետ Պիլ Պոկարթ, Հայաստանի եւ Զուիցերիոյ հիւպատոսներն ու այլ անձնաւորութիւններ:

Փասատինայի Հայկական միութիւններու եւ կազմակերպութիւններու համախմբուածի աջակցութեամբ նախաձեռնուած սոյն միջոցառումն սկսաւ դրօշակի արարողութեամբ, զոր կատարուեցաւ ամերիկեան բանակի (մարինզ) շրջանի միաւորին կողմէ: Ապա յատնկայս ունկնդրուեցաւ ԱՄՆ-ի եւ Հայաստանի քայլերգերը:

Ներկայ հոգեւորականներու կողմէ, «Հայր Մեր» Տէրունական աղօթքէն ետք, մէկ վայրկեան յոտնկայս լուրթեամբ յարգուեցաւ նահատակներու յիշատակը: Ապա 97-րդ տարեդարձի կազմակերպիչ մարմնի՝ Հայկական համախմբուածի անունով նահատակներու յիշատակը պանծացնող ելոյթ մը ունեցաւ օրուան հանդիսավար Վրոյր (Ռոյ) Պուլլուրճեան:

20-րդ դարու առաջին ցեղասպանութեան զոհ գացած հայ ժողովուրդի մէկ ու կէս միլիոն անմեղ զոհերու եւ պահանջատէր նոր սերունդի անժամանցելի արդար դատին ի նպաստ ելոյթներով հանդէս եկան քաղաքապետ Պիլ Պոկարթ, հրեայ համայնքի ռապալ ճաշուա Կէրթը, Սէպ Կերթմէնեան եւ Դաւիթ Մեկրուպեան:

Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Եղիա Մանսուրեան խօսք առնելով շեշտեց թէ հայրենի կառավարութեան արտաքին քաղաքականութեան օրակարգի մնացուն հարցն է հայոց Ցեղասպանութիւնը եւ մեր արդար դատի հետապնդումը միացեալ ուժերով:

Դոկտ. Յովհաննէս Աճմարանեան իր ելոյթին մէջ ինքնատիպ ձեւով ներկայացուց մծ հօր մը պատգամը իր թոռնիկին որ է լեզուի եւ ինքնութեան պահպանում եւ մեր անկորնչելի դատի հետապնդում:

Մեծ եղեռնի 97րդ տարեդարձին առիթով հուշակազիրներ փոխանցուեցան գոնկիսական ձիւտի Չուրի, սէնսթըր Գարօլ Լուրի, Անթոնի Բօրթանթիսոյի եւ Լոս Անձելըսի վերակացու Մայք Անթոնովիչի ներկայացուցիչներուն կողմէ:

Օրուան զեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Փասատինայի Հ.Բ.Լ.Մ.ի Ռաֆֆի եւ Դալար Մանուկեան ինչպէս նաեւ Յովսէփեան վարժարանի աշակերտներն ու երգիչ Սահակ Միսէնյանը:

Միջոցառումն աւարտեցաւ կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ Ռաչիկ Շահինեանի փակման խօսքով: Ան ընդգծեց որ Ուաշինկթընի ճամբան կ'անցնի Փասատինայէն, Կլենտօնիէն եւ Լոս Անձելըսէն: Ան կող ուղղեց ազգային միասնականութեան ի խնդիր մեր արդար դատի յաղթանակին: Ան յոյս յայտնեց որ մօտ ատենէն Փասատինայի մէջ պիտի կանգնի հայ նահատակներու յուշարձանը:

# ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԵՋ

Կիրակի օր, Ապրիլ 22-ին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ Թորոնթոյի Հայկական Յեղասպանութեան 97-րդ Տարելիցի ոգեկոչումը, կազմակերպութեամբ ազգային աւանդական կուսակցութեանց տեղական մասնաճիւղերուն (ՄԴՀԿ Փարամագ, ՀՅԴ Սողոմոն Թեհլիրեան, ՌԱԿ Եսայի Եպոկպեան) եւ ներկայութեամբ շատ մը պաշտօնական հիւրերու, հոգեւոր ու ազգային ներկայացուցիչներու:

Օրուայ բանախօսն էր Լիբանանի «Ազդակ» օրաթերթի բազմամեայ խմբագրապետ եւ Եւրոպայի Հայ Դատի գրասենեակի ներկայ Ֆրանսաբնակ տնօրէնը Պրն. Հրաչ Վարժապետեան:

Յարգելի բանախօսը եզակի հմտութեամբ եւ ճառախօսութեամբ հմայեց ներկաները, ճշգրիտ վերլուծումներով եւ բացատրութիւններով դաստիարակեց զինք մեծ հաճոյքով եւ ուշի-ուշով ունկնդրողները եւ հայրենիք-Սփիւռք լուրջ գործակցութեան կոչ ուղղեց յստակացնելով մեր իրաւասպանաշունչութեան բոլոր հանգրուանները: Անհաւասար պայքարի իրականութեան ակնարկելով, յարգելի բանախօսը «Քաղաքական Ռոմանթիզմ» անունով անցնող շրջանակներում առաւելումներ ու հայտնելու վճռականութիւնները: Բանախօսութիւնը ներկայներուն կողմէ գնահատուեցաւ ջերմ ու երկար յորհրդակալ ծափահարութեամբ:

### ՅՈՒՇԱՅԱՆԴԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԻԹԵԱՍԲ ՄԻՋ-ՅԱՐԱՆՈՒՄԱՆԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ

Երեքշաբթի օր, Ապրիլ 24-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Թորոնթոյի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 97-ամեակը:

# 97-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԶԵՆԱՐԿՆԵՐ ՄԻԱՅԵԱԼ ԹԱԳԱԽՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԵՋ

Բրիտանահայ համայնքացի եւ Եկեղեցական Խորհրդի կողմէ (ԲՀԵԽ) կազմակերպուած են շարք մը ձեռնարկներ՝ նշելու Հայոց ցեղասպանութեան 97-ամեակը:

Բրիտանահայ համայնքի ներկայացուցիչները քայլարշաւով անցած են Լոնտոնի կենդրոնում՝ դատապարտելով Թուրքիոյ ժխտողական քաղաքականութիւնն ու իրենց կոչը լղելով Միացեալ Թագաւորութեան իշխանութիւններուն՝ ճանչնալու Հայոց ցեղասպանութիւնը:

Ապրիլի 22-ին, Յեղասպանութեան գոհերու յիշատակին Լոնտոնի Սբ. Եղիշէ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած են Պատարագ եւ հոգեհանգիստի արարողութիւն, որմէ ետք ծաղկեպսակներ դրուած են եկեղեցւոյ բակին մէջ գտնուող Հայոց Մեծ Եղեռնի յուշարձան-խաչքարին:

### ԻՐԱՆԱՅԱՅԵՐԸ ԿՈՉ ՈՒՂՂԱԾ ԵՆ ԹՈՒՐՔԻՈՅ՝ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼ ԶԱՅԵՐԵՆ

Հայոց ցեղասպանութեան գոհերու 97-րդ տարելիցին առթիւ, Թեհրանի իրանահայերը ծաղիկներ դրած են Օսմանեան Թուրքիոյ կողմէ դարասկզբին սպանուած 1.5 միլիոն անմեղ գոհերու յիշատակը յաւերժացնող յուշարձանի մօտ:

Ինչպէս կը հաղորդէ IRNA գործակալութիւնը, յիշատակի ձեռնարկին մասնակցած են իրանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպանը, Թեհրանի մէջ Հայ առաքելական եկեղեցւոյ թեմի արքեպիսկոպոսը, հայ համայնքի ներկայացուցիչները:

Մասնակցիները կոչ ըրած են Թուրքիոյ կառավարութեան պաշտօնապէս ներողութիւն խնդրելու հայ ժողովուրդին 1.5 միլիոն հայերու զանգուածային սպանութեան համար:

### ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 97- ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԶՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Հնդկաստանի հայ համայնքը, Հայոց մարդասիրական ճեմարանի անձնակազմը Ապրիլի 24-ին Կալկաթայի Սուրբ Նազարէթ Մայր եկեղեցւոյ մէջ ոգեկոչած են Հայոց ցեղասպանութեան 97-ամեակը:

Ինչպէս «Հայերն Այսօրին» յայտնած են հայոց մարդասիրական ճեմարանին, եկեղեցւոյ բակին մէջ՝ Յեղասպանութեան գոհերու յուշակոթողի մօտ, տեղի ունեցած է հոգեհանգստեան կարգ՝ հանդիսապետութեամբ

# ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԼՈՒԻԶԵԱՆԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՊԱԹՈՆ ՌՈՒԺԻ ՄԵՋ

Լուիզիանա նահանգի մայրաքաղաք՝ Պաթոն Ռուժի փոքրաթիւ բայց գործունեայ եւ աշխոյժ հայ համայնքը պատշաճօրէն նշեց Եղեռնի նահատակներու 97րդ տարելիցը: Արդարեւ, տեղւոյն Սուրբ Կարապետ Հայաստանեայց Եկեղեցւոյ հիմնադրութիւնէն ի վեր ամէն տարի, այս փոքրաթիւ համայնքը, որ կը բաղկանայ մեծամասնութեամբ Հաճընցի արմատներէ սեռած ազգայիններէ, նախանձախնդրութեամբ կ'ոգեկոչէ 20րդ դարու առաջին ցեղասպանութեան գոհ դարձած ազգայիններու անմեղ յիշատակը: Այս տարի ալ, Կիրակի, Ապրիլ 22ին, եկեղեցւոյ կից սրահին մէջ հաւաքուած հայ թէ օտար հիւրերու ներկայութեան, տեղի ունեցաւ կողիկ յայտագիր մը: Եկեղեցւոյ ծխական խորհուրդի ատենապետ եւ համայնքի շարժիչ ուժ Պրն. Վազգէն Գալթաքճեանի բարի գալստեան խօսքով սկսաւ օրուան յայտագիրը: Անդրադառնալէ ետք օրուան խորհուրդին, ան բեմ հրաւիրեց այս առթիւ Լոս



Իմաստաւորող ու արժեւորող նպատակներ եւ իրենց կեանքերը նուիրելու անոնց իրագործման: Խրախուսեց զանոնք ըլլալու լաւատես, լայնամիտ, արդար ու ազգասէր: Իրենց սրտերէն ու



Անճելըսէն յատուկ ժամանած, «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմի անդամ եւ Նոր Սեբաստիոն Մշակութային Միութեան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեանը, ներկայներուն փոխանցելու իր պատգամը: Բանախօսը իր յարգանքի տուրքը մատուցանելէ ետք մեր նահատակներուն, գնահատեց այն բոլոր ջանքերը, որ տարուէ տարի ի գործ կը դրուին յաւերժացնելու անոնց անմոռաց յիշատակը եւ գայն վառ պահելու նորահաս սերունդի մտքերուն եւ հոգիներուն մէջ: Բայց որպէս զի այս յիշատակումները չդառնան յաւուր պատշաճի արարողութիւններ, ան կարեւորեց ծրագրային մօտեցման անհրաժեշտութիւնը, երբ անհատական թէ հաւաքական մակարդակի վրայ նպատակակէտեր կ'ընտրուին եւ տարուէ տարի անոնց իրագործման համար աշխատանք կը տարուի: Օրինակ բերելով Եղեռնէն վերապրած իր հօր կեանքը, ան խրախուսեց մանաւանդ մեր նորահաս սերունդի անդամները, ընտրելու իրենց կեանքերը

միտքերէն դուրս վանելու ամէն տեսակի քանդիչ մտածելակերպ, ինչպէս՝ ատելութիւն, նախանձ, անձնասիրութիւն եւ ծուլութիւն: Յանձնարարեց անոնց ուրիշը յանձաւոր չի գտնելու իրենց ձախողութեանց համար, այլ ընդունելով իրենց սխալը ու սրբագրելով զանիկա, բարձրացնելու իրենց անձերը յաջողութիւնէ յաջողութիւն: Բանախօսը յստակացուց, որ երբ ամէն մէկս ալ կը գործենք այդպիսի նախանձախնդրութեամբ, ապա ոչ միայն նպաստած կ'ըլլանք մեր անձնական յաջողութեանց, այլ նաեւ մեր հաւաքական յաջողութեանց ու այդպիսով մեր վրէժը լուծած կ'ըլլանք մեր բիւրաւոր նահատակներու յեղուած արեան: Բանախօսութեան աւարտին տեղի ունեցաւ հարց-պատասխանի աշխոյժ բաժին մը, որմէ ետք ներկաները անցան եկեղեցւոյ հողին վրայ գտնուող հայկական գերեզմանատունը, ուր ծաղկեպսակ գետեղեցին Հայաստանէն բերուած հոյակապ խաչքարին վրայ:

Հնդկաստանի հայոց հոգեւոր հովիւ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տէր Խորէն վարդապետ Յովհաննիսեանի:

Ներկաները ծաղիկներ դրած են յուշակոթողին: Հնդկաստանի մէջ Հայոց ցեղասպանութեան գոհերու յիշատակը յաւերժացնող յուշարձանը կառուցուած է 1965 թուականին՝ Մեծ եղեռնի յիսունամեայ տարելիցի առիթով՝ անսայով երջանակաշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի 1964 թուականի Օգոստոս 17-ի Սրբատառ Կոնդակին:

### 25 ՀԱԶԱՐ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐ ՑԵՂԱՍՊԱՆԵՆ ՊԱՀԱՆՁԵՑԻՆ ՃԱՆՉՆԱԼ ԻՐ ՈՃԻՐԸ

Լիբանանի մէջ տեղի ունեցող Մեծ Եղեռնի 97-ամեակի գլխաւոր միջոցառումները կը վայելէին Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմինին հովանաւորութիւնը: Հայ քաղաքական կուսակցութիւններու, յարանուանութիւններու եւ Հ.Բ.Ը.-Միութեան ներկայացուցիչներէ կազմուած մարմինը ունենալով համայնքի երիտասարդական, մշակութային, մարզական միաւորներու օժանդակութիւնը, բողոքի քայլարշաւով մը որոշած էր պահել Ապրիլ 24-ի այս տարուան հանդիսութիւններու շարքը: Արդարեւ, Երեքշաբթի առաւօտեան, Անթիլիասի մայրավանքին մէջ, Լիբանանի տարբեր վայրերէ ժամանող հայորդիներ եկած էին յարգանքի իրենց սուրբը մատուցելու նահատակներուն յիշատակին: Առաւօտեան կանուխ ժամերէն ծաղկեպսակները ողորած էին Յեղասպանութեան մատուռին մուտքը: Սկստուողին, արեւոյշներ կը դիմաւորէին հայ քաղաքական, պետական, հասարակական, ազգային եւ հոգեւոր ներկայացուցիչներու մուտքը մայրավանք, որոնց մէջ ՄԴՀԿ Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ ընկեր Ալեքսան Քէօզկերեան, պետական երեսփոխաններ ընկեր Սեպուհ Գալիաքեան, մեթր Սերժ Թուրսարգիսեան, Ժան Օղասապեան: Անթիլիասի մայրավանքին մէջ տեղի ունեցաւ պատարագ, ապա հոգեհանգստեան պաշտօն՝ Հայոց դէմ գործուած ցեղասպանութեան զոհերու յիշատակին:



Նախքան վեհափառ հայրապետին պատգամը, Յեղասպանութեան մատրան առջեւ տեղի ունեցաւ ծաղկեպսակներու զետեղում: ՀԲԸՄ- ՀԵԸ-ի, ՀՄՄ-ի եւ ՀՄԸՄ-ի փողերախումբերը հնչեցուցին Հայաստանի, Լիբանանի քայլերգները, Շոփէնի մահերգը, ինչպէս նաեւ այլ նուագներ: Յաջորդաբար Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան տիար Աշոտ Քոչարեան, Հայ քաղաքական երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներ, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմնի անունով ծաղկեպսակներ զետեղեցին Յեղասպանութեան մատուռին առջեւ: Ապա հերթաբար, լիբանանահայ տարբեր հասարակական, բարեսիրական, մշակութային եւ մարզական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ զետեղեցին ծաղկե-

պսակներ: Այս առիթով, ծաղկեպսակներ զետեղուեցան նաեւ ՄԴՀԿ «Տիրուհի» Ուսանողական-Երիտասարդական Միութեան, ՀՄՄ-ի, Նոր Սերունդ Մշակութային Միութեան, ՀԿԲՄ-ի, ՀՄՄ «ՄԱՍԻՍ»-ի անունով: Ծաղկեպսակներու զետեղման արարողութիւնը աւարտելէ ետք, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառը փոխանցեց օրուան պատգամը (վեհաբար Տիրոջ պատգամը տեսնել երկրորդ էջի վրայ):

Վեհափառին պատգամէն անմիջապէս ետք, Հայոց Յեղասպանութեան Լիբանանի Կեդրոնական Մարմնի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ բողոքի ցույց դէպի թրքական դեսպանատուն: Բողոքի արշաւի ամբողջ տեւողութեան, ՀՄՄ-ի եւ ՀՄԸՄ-ի փողերախումբերը իրենց խրոխտ նուագներով առաւել ոգեգորեցին բողոքի արշաւին մասնակիցները: Տաննեակ հազարաւոր լիբանանահայեր՝ երէց, տարեց, դպրոցական, արհեստաւոր, ուսանող, պետական, կուսակցական, ազգային, հոգեւորական եւ հասարակական դէմքերու գլխաւորութեամբ ուղղուեցան դէպի Ռապիյէի թրքական դեսպանատունը: Տեսարանը եւ արշաւին մասնակցողներուն ոգեւորութիւնը աննկարագրելի էր: Ամբոխը կիրթ եւ գուսպ քայլերով հասաւ դեսպանատան մօտակայ վայր մը: Այս միջոցին հազարաւոր հայորդիներ իրենց ընդվզումն ու ցասումը արտայայտեցին Անգարայի Ժխտողական քաղաքականութեան դէմ եւ պահանջեցին հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն ճանաչումը: Բողոքի արշաւը արշաւը վերջ գտաւ Սարդարապատ-ի համաժողովրդային կատարողութեամբ:

### ՈՒՐՈՒԿՈՒԱՅ ԿԵՐԱՀԱՍՏԱՏԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ ԻՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ



Յեղասպանութիւն բառը կը համապատասխանէ հայերու դէմ գործուած ոճիրը բնութագրելու համար: Այդ մասին յայտարարեց Ուրուկուայի արտաքին յարաբերութիւններու նախարար Լուիս Ալմակրո, Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակի օրը՝ Ապրիլի 24-ին երկրի մայրաքաղաք Մոնթեվիտոյի Արմենիա հրապարակին վրայ կայացած միջոցառման ժամանակ:

Ուրուկուայահայ Բազմամիութեան կազմակերպութեան կողմէ կազմակերպուած հանդիսութեան ժամանակ ելոյթ ունենալով, գործադիր իշխանութեան անունով՝ Ալմակրո վերահաստատեց Հայոց ցեղասպանութիւնը տակաւին 1965

թուականին աշխարհի մէջ առաջինը ճանչցած իր երկրի դիրքորոշումը:

Նախարարը կարեւոր նկատեց, որ պէտք է վերջապէս հաստատուի միջազգային դատարան մը՝ մարդկութեան դէմ այս յանցագործութիւնները դատապարտելու համար: Ան դրական կարծիք յայտնեց ցեղասպանութիւններու ժխտման քաղաքականութիւնը օրէնքներու միջոցով սահմանափակելու հարցով:

Ալմակրո իր ելոյթի վերջաւորութեան յայտնեց, որ յառաջիկայ շաբաթներուն պիտի կատարէ իր առաջին պաշտօնական այցելութիւնը Հայաստան:

### ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ



Հայոց Մեծ Եղեռնի 97-ամեակին առիթով Դամասկոսի առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցու մէջ մատուցուած է սուրբ պատարագ, ապա հոգեհանգստեան կարգ՝ Յեղասպանութեան յուշարձանին մօտ, որմէ ետք սգոյ արարողութեան մասնակիցները ուղեւորուած են Դամասկոսի հայոց գերեզմանատուն՝ ուր կը գտնուի Հայոց Յեղասպանութեան զոհերու յուշահամալիրը:

Ըստ արտաքին գործոց նախարարութեան մամուլի, տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապի վարչութեան հաղորդագրութեան, յուշահամալիրին մէջ Սուրիոյ մէջ

ՀՀ դեսպան Արշակ Փոլատեան եւ դեսպանութեան անձնակազմը ծաղկեպսակ զետեղած են Եղեռնի զոհերու յուշարձանին:

Արարողութեան մասնակցած են բազմաթիւ սուրիահայեր, Հայաստանի քաղաքացիներ, լրագրողներ, հասարակական գործիչներ:

Նոյն օրը Սուրիոյ մէջ ՀՀ դեսպանութիւն այցելած են սուրիահայ համայնքի երեք համայնքապետերը, համայնքի կուսակցական եւ միութեանական ղեկավարները, գաղութի ներկայացուցիչները եւ իրենց արձանագրութիւն ձգած՝ ոգեկոչման յուշամատենին մէջ:

massispost.com  
daily news updates

## ՌՈՒՄԱՆԻՈՅ ՏԱՐԲԵՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄՆ ՄԵՋ ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Ապրիլի 24-ին Ռու-մանիոյ մէջ տեղի ունեցան Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակի ձեռնարկներ, որոնց մասնակցեցան հարիւրաւոր ուսումնասայներ, ինչպէս նաեւ ուսումնական օրէնսդիր եւ տեղական մարմիններու ներկայացուցիչներ, մտաւորականներ, արուեստագէտներ եւ համալսարանականներ:



Պուխարեստի Հայոց Մայր եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ յիշատակի հոգեհանգիստ, որուն ներկայ էին Յոյն Կաթոլիկ, Ղպտի ուղղափառ եւ Բողոքական եկեղեցիներու ներկայացուցիչները, այնուհետեւ Ռումանիոյ մէջ Հայաստանի դեսպանութեան, Հայ Առաքելական եկեղեցւոյ Ռումանիոյ թեմի եւ Ռումանիոյ Հայոց միութեան կողմէ ծաղկեպսակներ գետեղուեցան Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին նուիրուած իսաչքար-յուշարձանին:

Հայոց ցեղասպանութեան 97-րդ տարելիցի միջոցառման, ելոյթներով հանդէս եկան Հայ Առաքելական եկեղեցւոյ Ռումանիոյ թեմի առաջնորդ Տաթև Եպս. Յակոբեան եւ Ռումանիոյ մէջ Հայաստանի դեսպան Համլէտ Գասպարեան, մտահոգութիւն չաշտնելով թուրքիոյ կողմէ իր հակահայ քարոզչութեան մէջ Եւրոպայի մէջ բնակող թուրք համայնքները:

Արարողութենէն ետք ուսումնասայները Հայաստանի դրօշներով եւ ցեղասպանութիւնը դատապարտող պատառներով ուղղուեցան դէպի Պուխարեստի Հռոմի հրապարակ, ուր հաւաքուածներուն եւ անցորդներուն բաժանեցին ցեղասպանութեան մասին պատմող նիւթեր:

## 97-ԱՄԵԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Ապրիլի 24-ին Իտալիայի Սենատը՝ ի դէմս նախագահող Վանինօ Կիտիի եւ սենատորներ Ալբերտինա Սոլիանիի, Ֆրանչեսկօ Պարզիի, Լաուրա Ալբերտինիի, յիշատակել է Հայոց ցեղասպանութիւնը՝ կոչ անելով քաղաքական համարժէք պատասխան տալ կատարուած ողբերգութեանը, քանի որ ժխտողականութիւնն այլեւս անհանդուրժելի է: Ալբերտինի, մասնաւորապէս, յիշատակել է, որ Հայաստանի աշխարհագրական դիրքը եւ ներկայումս դեռեւս լուծուած չստացած ԼՂ հակամարտութիւնը լարուածութեան մէջ են պահուած Հայաստանը, ով մեծապէս կարեւորում է ժողովրդավարութիւնը եւ Եւրոպայի հետ մօտ լինելը:

Իտալիայում ՀՀ դեսպանութեան հովանաւորութեան ներքոյ Իտալիայի բազմաթիւ քաղաքներում տեղի են ունեցել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած միջոցառումներ:

Ապրիլի 13-ին եւ 14-ին համապատասխանաբար թուրինում եւ Աւիլեանայում տեղի են ունեցել երկու տարբեր միջոցառումներ հետեւեալ վերնագրերով. «Բաւեր եւ երաժշտութիւն, որպէսզի չմոռացուի. ի յիշտակ Հայոց ցեղասպանութեան» եւ «Ելեւէջներ Արարատից»: Իտալացի հասարակութեան են ներկայացուել հայ կոմպոզիտորների գործեր: Հանդիսութիւններին ներկայ են եղել Իտալացի քաղաքական գործիչներ:

Ապրիլի 22-ին Հռոմի Սուրբ Նիկողայոս հայկական եկեղեցում կազմակերպուել է Գիւրջիեւի անուան ժողովուրդարանների համոյթի համերգը: Համերգին ներկայ էին շուրջ 100 հոգի, այդ թւում՝ Իտալիայի քաղաքական գործիչներ, պետական պաշտօնեաներ, լրագրողներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Ապրիլի 24-ին Նեապոլի Սան Ֆրանչեսկօ դի Պաուլա Թագաւորական եւ Քահանայապետական մայր տաճարում պատարագ է մատուցուել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին եւ փոխանցուել է Իտալիայում ՀՀ դեսպան Ռուբէն Կարապետեանի ուղերձը: Պատարագից յետոյ կազմակերպուել է երթ դէպի Նեապոլի Նահատակների հրապարակ, որտեղ, ի յիշտակ Եղեռնի անմեղ զոհերի, գետեղուել է ծաղկեպսակ: Երթի ժամանակ բաժանում էին տեղեկատուական բրոշուրներ 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան մասին:

Ապրիլի 24-ին Հռոմի Սուրբ Նիկողայոս հայկական եկեղեցում եւ Միլանի Հայ Առաքելական եկեղեցում նոյնպէս պատարագներ են մատուցուել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին:

Ապրիլի 24-ին Կուզանօ Միլանիւս քաղաքում տեղի է ունեցել «Մեծ Եղեռն. 1915թ. Ցեղասպանութիւն» վերնագիրը կրող երեկոյթը, որի ընթացքում կարդացուել է Ցեղասպանութեանը նուիրուած գեկոյց, իսկ վերջինիս աւարտին ցուցադրուել է Անրի Վերնոյի «Մայրիկ» ֆիլմը:

## ՉԵԽԻՈՅ ՄԵՋ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 97-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿ

Հայոց ցեղասպանութեան 97-րդ տարելիցին նուիրուած ձեռնարկներու ծիրէն ներս Ապրիլ 24-ի առաւօտեան Չեխիոյ մէջ Հայաստանի դեսպան Տիգրան Մէյրանեան եւ խումբ մը չեխահայեր ծաղիկներ դրին անուանի գրող, «Մուսա Լեւրան Քառասուն Օրը» վէպի հեղինակ Ֆրանց Վերֆելի կիսանդրին, որ գետեղուած է այն տան մօտ, ուր ծնած է մեծանուն մարդասէրը: Այս մասին կը տեղեկացնեն ՀՀ ԱԳՆ լրատուական ծառայութենէն:

Այնուհետեւ, յարգանքի տուրք մատուցուեցաւ ԱՄՆ 28-րդ նախագահ, Նաղաղութեան Նոպէլեան մրցանակի դափնեկիր եւ Հայկական հարցի արդարացի լուծման Չատագով Թոմաս Ուուտրօ Ուիլսոնի յուշարձանին:

Արարողութիւններուն ելոյթ ունեցած են դեսպան Տիգրան Մէյրանեան, Չեխիոյ, Սլովաքիոյ եւ Հունգարիոյ հայ համայնքներու հոգեւոր հովիւ Բարսեղ վարդապետ Փիլաւեան:

Պրահայի կեդրոնական հրապարակներուն վրայ հարիւրաւոր չեխահայերու եւ չեխ հասարակութեան ներկայացուցիչներու մասնակցութեամբ տեղի ունեցած է Հայոց ցեղասպանութեան դատապարտման նուիրուած հանրահաւաք-երթ:

Ապրիլի 23-ին Երեկոյեան Հայ Կաթոլիկ պատրիարքարանի Մեծ եղեռնի յուշակոթողին շուրջ տեղի ունեցած է հսկումի երեկոյ՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան նահատակներու յիշատակին:

## ՎՐԱՍԱՆԻՑ ՊԱՅԱՆՁԵՑԻՆ ՃԱՆԱԶԵԼ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայոց ցեղասպանութեան 97-րդ տարելիցին նուիրուած միջոցառումների շրջանակներում, Ապրիլի 23-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակութային կենտրոնի, «Վրաստանի հայ համայնք», «Վրաստանի հայերի ազգային կոնգրէս» եւ «Թբիլիսեան հայերի ասամբլիա» կազմակերպութիւնների նախաձեռնութեամբ եւ ջակցութեամբ խաղաղ հանրահաւաք անցկացուեց Վրաստանի խորհրդարանի շէնքի առջև:

«Ոչ՝ ցեղասպանութեանը» - «Հայոց Մեծ Եղեռն՝ 97» ցուցապատաներով հանրահաւաքի մասնակիցները Թբիլիսիի Ռուսթաւելիի անուան պողոտայի վրայ գտնուող խորհրդարանի կենտրոնական մուտքի հրապարակում կազմակերպեցին ֆլեյմոք՝ մոմերով կազմած իսաչի եւ աւանդական պարի լուռ կատարմամբ:

Այնուհետեւ հանրահաւաքի մասնակիցները Վրաստանի խորհրդարանին յանձնեցին անուան առ անուն բոլոր պատգամաւորներին ուղղուած Հայոց Մեծ Եղեռնը ճանաչելու Վրաստանի հայութեան դիմումը՝ պահանջելով ընդունել եւ դատապարտել Հայոց ցեղասպանութիւն իրողութիւնը:

Ապրիլի 23-ի հերթական միջոցառումը, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի եւ Վրաստանում ՀՀ դեսպանութեան հովանաւորութեամբ, Թբիլիսիի Պետրոս Աղամեանի անուան հայպետդրամայի թատրոնի «Յիշատակի երեկոյ» ներկայացումն էր, որը կայացաւ Նոդար Դոմբաձէի անուան պատանի հանդիսատեսի թատրոնում:

Թբիլիսիի հայկական թատրոնի ստեղծագործական խմբի կողմից ներկայացուած գրական կոմպոզիցիան հիմնուած էր հայ ժողովրդի պատմութեան արևնոտ ջջերի ոգեկոչման եւ համայն հայութեան արդարատենջ յաղթանակի դրուագների վրայ:

Նոյն օրը Երեկոյեան Ցեղասպանութեան զոհերի յիշատակի միջոցառումների շրջանակներում «Վրաստանի հայ համայնք» ոչկառավարական կազմակերպութիւնը իրականացրեց ջահերով երթ: Հրավառուող ջահերով եւ ցուցապատաներով հայ համայնքի երիտասարդները Թբիլիսիի Յաղթանակի զբօսայգուց շարժուեցին դէպի Թուրքիայի դեսպանութիւն:

Դեսպանութեան առջև հաւաքուած երիտասարդութիւնը արդարութեան վերականգնման պահանջատիրական կոչեր ուղղեց թուրքական իշխանութիւններին: Երթի մասնակիցները կոչ արեցին թուրքիային՝ սեփական պատմութիւնից հրաժարուելու եւ իրականացուած ոճրագործութիւնները ժխտելու փոխարէն, խստովանել յանցանքն ու խոնարհուել մէկ ու կէս միլիոն անմեղ զոհուած հայերի յիշատակի առջև եւ ճանաչել Մեծ Եղեռնը:

Թբիլիսիում շարունակուել են Հայոց ցեղասպանութեան 97-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները:

## ԵՐԹ ՎԻՆԵՆԱՅԻ ՄԵՋ

Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին սգոյ երթ է կազմակերպել Աւստրացի հայ ուսանողական եւ երիտասարդական կազմակերպութիւնը (ASV):

Երթը, որի ընթացքում հայ երիտասարդները Վիեննայի փողոցներում հնչեցրել են հայրենասիրական երգեր, սկսուել է քաղաքի Սուրբ Հովիփսիմէ եկեղեցուց՝ աւարտուելով Վիեննայի ամենաբազմամարդ հատուածում՝ կենտրոնական հրապարակում գտնուող Շտեֆանսդոմ եկեղեցու մօտ:



Այստեղ հայ համայնքի երիտասարդները տարբեր լեզուներով տեղեկատու թերթիկներ են բաժանել անցորդներին՝ նրանց ներկայացնելով 1915 թ.-ին Օսմանեան թուրքիայի կողմից սանձազերծուած Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը:



### ՁԵՐ ՕՐՅՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԽՆԴՐԵՆՔ ԼՈՒՍԻՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Անմահացած էք մեր տան մառանի պատերուն վրայ:

Ձեզ հետ խօսած եմ տարիներ անվերջ:

Ձեր գաւակները, իմ ծնողները, սորվեցուցին ինձ մայրենի լեզուն որ լաւ կը խօսիմ:

Ետ ինձ կը նայիք, մտածկոտ, ն կ ա ը ն ե ը ու ն ընդմէջէն:

Ձեր ձեռքերով իսկ կարողած հագուստներ հագած էք այդտեղ:

Ձեր այդ ձեռքերը բրտացած են ցանելէն, շինելէն, շաղելէն եւ կարկտելէն:

Ձեր երեսները անդրդուելի, նոյնիսկ հ ա ը ու ա ն ե կ ա ն հանդերձանքներով:

Ձեր աշխարհահայեաց արտայայտութիւնն ցաւի անտրտունջ շուքը կ'ընդգրկէ:

I ask you to recall our gentle *kertastan* before the seizures, slaughters and destruction.

I try to picture how you subsisted as lambs before wolves.

You patiently listen as I speak of the burdens of today's Armenian — no matter how light when compared to yours, and sometimes just as onerous.

Then I ask forgiveness for not doing more.

Many times I seek to borrow your strength, your all-seeing wisdom.

Why did you die before I could know you?

In my mind, your penetrating eyes lavish the love only grandparents can give.

Year after year, I yearn for you to speak up and say,

"We see you clearly from above.

You carry our blood in your veins.

You feel our ancient world in your bones.

You live with our history.

You possess our ethic.

You dance and sing authentically.

You persist in spite of exile.

You know our sufferings.

You speak for us.

You won't forsake us.

You have our blessing.

You do us justice.

You are Western Armenia."

## Armenian Genocide's Memory Will Never Fade

Continued from page 1

of Komitas, a prominent Armenian composer and survivor of the 1915 massacres in Ottoman Turkey.

Both Hollande and Sarkozy urged Turkey to recognize the Genocide of some 1.5 million Armenians. They also said that a new bill making it a crime to deny that the massacres constituted genocide would be brought before the French parliament already in June.

Hollande, who narrowly defeated Sarkozy in the first round, said he would make sure that the new law is drafted with "utmost legal security" in order to ensure its approval by the country's highest court. "We can no longer commit an imprecision that would again leave us with the impossibility of having the text validated," he said.

Sarkozy, who was instrumental in the last's bill passage, made an emphatic case for criminalizing any public denial of crimes against humanity. "There are statements that are not opinions," he said. "Democracy is not about authorizing anyone to say anything without respecting the victim. This is not what democracy is all about."

"Disputing a truth like genocide is unacceptable in the territory of the French Republic," he said in a speech videotaped and posted by his press office on website of the presidential

Elysee Palace.

Sarkozy also renewed his calls for Turkey to "revisit its past" and stop denying the first genocide of the 20th century. "The entire world has recognized that it was a genocide," he said.

Significantly, the French leader spoke out against the idea of Turkish and Armenian historians jointly studying the events of 1915 and determining whether they indeed amounted to genocide. "Would anyone have an idea to tell our Jewish compatriots that there needs to be a commission of historians to clarify whether the infamous act of the Holocaust existed in Europe?" he argued. "That would be offensive, unacceptable and intolerable."

The incumbent president stated that he was "stunned" by what he saw at the Armenian genocide memorial in Yerevan during a state visit to Armenia last October. "I want to tell all those who haven't made such a trip, who haven't seen what I saw, and who haven't heard what I heard that they cannot understand the memory of this unspeakable pain of all Armenians," he said.

"Visiting Yerevan, I understood what millions of Armenians feel when thinking about that genocide because I could imagine each of them putting themselves in the place of their grandparents and ancestors and wondered how I myself would have reacted," added Sarkozy.

## Book Review:

### “A Study of the Origins of the Hai- the First People”

Review by Jirair Tutunjian

One of the wonders of Prof. Hovhanness Pilikian’s “Origins of the Hai—the First People” is the author’s ability to impart so much new and stunning data and fact-based speculation within the slim volume.

The second wonder of the book is the polymath professor’s gutsy (some might say reckless) criticism of the Bing Bang theory and everyone from Charles Darwin to Western scholars who, the author says, push the British-French-German imperial and racist agenda by distorting the truth about the origins of mankind and the key role of the Armenian nation in that history. The same false paradigm is being maintained by the American neo-con promoters of globalization, according to the author. The professor, who speaks 11 languages, marshals his expertise as a social scientist and his scholarly knowledge of anthropology, psychology, linguistics, history, literature and music to shake many fundamental precepts of the Western view of mankind’s earliest history.

First of the London-based professor’s targets is Darwin. He says Darwin’s assumption that the first human originated in the African savannah is without basis. “...such totally boring landscape [savannah] is not conducive to initial human brain development in terms of potential intelligence,” he asserts. To develop physiologically, our brain needs challenging, exciting, varied environments found only in mountainous landscape. The author, citing a variety of factors, concludes that the Armenian Plateau must have been mankind’s alma mater. To back up his conclusion, Prof. Pilikian says the story of Noah’s flood “is not about the sinking of the earth in rain-torrents, but in actual fact its performative reverse—the appearance of the very first piece of land constructed by and surrounding the region of the cataclysmic volcanic eruption of the Ararat Mountains rising from

under the oceans.” And when the oceans began to recede, Ararat appeared as the first land and the heartland of ancient Armenia. Subsequent eruptions resulted in the formation of the Armenian Plateau, Anatolia, the Middle East and the rest of the world’s surface.

The above scenario is a mirror image of the ancient Armenian poem about the birth of Vahagn, the god of fire.

“Heaven and Earth [exploding volcano in unimaginable force] were in travail [childbirth pains]

And the crimson waters [fiery red lava-flow] were in travail.

And in the water, the crimson reed [the fiery phallic column of the ejected lava] was also in travail...”

In a mind-boggling revelation, the author says the Noah’s Ark is a metaphor of a millennia-old buried scientific fact: the Armenian Highlands is Noah’s Ark. The highland is the fertile landmass after the outpouring of lava and ash-rain. Consequently, the first plants and animals and wo/mankind made their appearance around Ararat. “The Armenian Highlands, uniquely on this planet (with Tibet, on a miniscule scale in comparison) are the most massive massif, the hugest single plateau on top of volcanic mountain ranges,” writes Prof. Pilikian and points out that in a stylized cross-section, Anatolia’s profile reflects the image of Noah’s Ark. He concludes that the whole of ancient Armenia is the Ark of Noah.

The book’s next big theme is the worship of the sun cult, the first monotheistic religion. The author maintains that the sun was worshipped by the very first people—the Armenians. The cult, transmitted to ancient Egypt was transformed into the worship of sun god Ra, the oldest god of that country. The spelling of Ra is the Semitic dialectical reverse of the Indo-European AR (the root of Ar-ar-at). Prof. Pilikian somehow doesn’t mention that the word for sun is AR-ev/AR-ek in Armenian.


The third big theme of the book is the origin and explication of the word HAI. To analyze the word’s linguistic history, Prof. Pilikian uses the technique of sub-atomic particle physics. He postulates that H-A-I is the fundamental archetypal phonemic vowel—the quark proton in all languages...the very first phoneme in the universal grammar.” He also makes the interesting claim that all five vowels are rooted in the sound of “A.”

The book then links HAI to KhAi/KhI/KhUI and Khoi. Khoi (ram in Armenian), an Armenian god, is phonetically connected to Cor-inth, A-ch-r-nians, A-chai, Io-nians, A-chae-manians. The Hittites called themselves the Kha-tti. The Greek word for Earth is Gaia (KHAI-A) “acknowledging the original earth of the Pangaea to have been the locus and the trope, the land of the HAI in the Ararat Region,” says Prof. Pilikian. Exploring the family tree of the word KHA-I, the author also sees links with the Phoenician Ca-dmus (a man of Khai... man from Ararat). Cadmus introduced the alphabet to Greece. The 5th century Armenian historian Movses Khorenatsi (“History”) has written that Cadmus was the grandson of the Armenian patriarch HAI-k, the plural of HAI in classical Armenian.

Prof. Pilikian maintain that the whole of the Greek alphabet—and consequently all the alphabets of the world—are graphic designs, pictorial representations of the variety of Khoe-Ram horns. In the Van dialect of Armenia, the alphabet is called Ai-ds-a-kir (goat letter). This leads the author to conclude that the first alphabet was conceived in the Armenian Highlands.

Digging deeper into the significance of the HAI phonetics, the professor points out that A-I is the sound of ontological pain, the first scream of a newborn child. “The same linguistic fossil preserves a mind-blowing history of thousands of millennia of mankind’s pre-history recording technological advances and habitation,” he says.

From there the book connects HA-



I to AI-R. In Armenian the latter word means man or undifferentiated gender, kar-air (cave) and is the root of air (burn). Thus the reader observes connections between man, dwelling, and fire, all rooted in HAI.

Continuing his one-man campaign of shibboleth shattering, Prof. Pilikian says Hebrews and Arabs originated in the Armenian Plateau. He also notes connections between the Hebrew Jehovah/IAH-WAH and the Arabic All-h with HA-I and asks whether the South African Khoi people originated in Armenia. A possible relationship between Khoi and Kalahari is another observation. The author speculates that the pyramids of Egypt (like the Tower of Babel) are copies of Ararat and that the natives of Japan’s Hokkaido Island might have been originally Armenian. To buttress his case, the professor provides a number of linguistic and anthropological clues.

In his conclusion the daring author postulates that the true Garden of Eden is the whole world, not a fantasy somewhere in afterlife. Citing the Hebrew Bible, the author states that the Kingdom of God must be built here on earth and adds, “and it is we, wo/mankind that through our ignorances and stupidities turn this life-god-given paradise into genocidal hell, only and only because of unnecessary, futile, foolish, Capitalist greed...”

To purchase the book, contact the Assembly of Armenians of Europe in Uppsala, Sweden at [www.aaeurop.com](http://www.aaeurop.com)

## President Obama Again Avoids "Genocide"

Continued from page 1

suffering that took place 97 years ago, we join millions who do the same across the globe and here in America, where it is solemnly commemorated by our states, institutions, communities, and families. Through our words and our deeds, it is our obligation to keep the flame of memory of those who perished burning bright and to ensure that such dark chapters of history are never repeated.

I have consistently stated my own view of what occurred in 1915. My view of that history has not changed. A full, frank, and just acknowledgement of the facts is in all of our interests. Moving forward with the future cannot be done without reckoning with the facts of the past. The United States has done so many times in our own history, and I believe we are stronger for it. Some individuals have already taken this courageous step forward. We applaud those Armenians and Turks who have taken

this path, and we hope that many more will choose it, with the support of their governments, as well as mine.

Although the lives that were taken can never be returned, the legacy of the Armenian people is one of triumph. Your faith, courage, and strength have enabled you to survive and prosper, establishing vibrant communities around the world. Undaunted, you have preserved your patrimony, passing it from generation to generation. Armenian-Americans have made manifold contributions to the vibrancy of the United States, as well as critical investments in a democratic, peaceful, and prosperous future for Armenia. The United States is proud of your heritage, and your contributions honor the memory of those who senselessly suffered and died nearly a century ago.

On this solemn day of remembrance, we stand alongside all Armenians in recalling the darkness of the Meds Yeghern and in committing to bringing a brighter future to the people of Armenia.

## Armenia Marks 97th Anniversary of Genocide

Continued from page 1

ing clergy of the Armenian Apostolic Church. Catholicos Karegin II, the church’s supreme head, led a prayer service for the dead.

Leaving aside their political differences and reciprocal accusations amid a heated parliamentary election race, representatives of Armenian political forces took a “day off” from the campaign to join in the national day of mourning for the 97th annual commemoration of what was the first Genocide of the 20th century.

US Ambassador to Armenia John Heffern and other diplomatic representatives also visited Tsitsernakaberd Memorial today to pay tribute to the memory of the Armenian Genocide victims.

“April 24 is a very important day for all Armenians,” U.S. Ambassador

John Heffern told journalists.

The Ambassador avoided using the word “genocide” to describe the events of 1915. “We are here to appeal to memory of massacres of Armenians in 1915,” he said.

“We must remember what happened 97 years ago, at the same time looking into the future,” German Ambassador to Armenia Hans-Jochen Schmidt said.

“Turkey must assume responsibility for all it did,” the Ambassador added.

According to him, the recognition of the fact by the Turkish Government is important for the establishment of friendship between the two peoples.

“If you want to build the future, you must face the past, like Germans did,” Ambassador Schmidt added.

“If Turkey wants to join the European Union, it should a



# ԿԻԼԻԿԵԱՆ ԳԵՄԱՐԱՆԻ 90-ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱԼԵՊԻ ՄԷՋ

## ԱՆԻ ՄԱՐՍԻԼԵԱՆ

Կիրակի, Ապրիլ 15, 2012ը պատմական թուական մը պիտի մնայ Հայկապատմական կրթական կեանքէն ներս: Արդարեւ, այդ օր համագործակցին մակարդակով նշուեցաւ տեղւոյն կիրիկեան ճեմարանի հիմնադրութեան 90րդ տարեդարձը Կրթասիրացի «Ջոհրապ Գաբրիէլեան» սրահին մէջ:

Կրթական այս մեծ հաստատութեան յոբելինական տօնակատարութեան հովանաւորն է կիրիկեան Շրջանակի ինստիտուտները: Իսկ օրուան նախագահն էր կիրիկեանի նախկին սաներէն եւ Դամասկոսի Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպանտեան:

Սոյն հանդիսութեան ներկայ էին Բերիոյ Թեմի Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Գերապաճառ Տէր Պետրոս Արք. Միրիաթեան, Սուրբոյ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ համայնքապետ Վերապատուելի Յարուհի Սելիմեան, Հայկա եւ Տէր Զօր քաղաքներու Հայաստանի հիւպատոսները, ինչպէս նաեւ ՌԱԿ-ի, ՀԲԸՄ-ի, հայկապահայ կրթական, մշակութային եւ հայրենակցական միութիւններու ներկայացուցիչներ, ուսուցիչներ եւ կիրիկեանցիներու հոծ բազմութիւն մը:

Յոբելինական հանդիսութիւնը սկսաւ սուրիական, հայկական եւ կիրիկեան քայլերգներու յոտնկայս ունկնդրութեամբ: Բեմավար օր. Վարդուհի Չաթախչեան, բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, բեմ հրաւիրեց օր. Նորա Փրկիչոսեանը եւ օր. Յամիկ Գուլումճեանը յաջորդաբար կատարելու հայերէն եւ արաբերէն բացման խօսքերը, որ կը բովանդակէր, երախտագիտութեան զգացումներ այս հաստատութեան հիմնադիրներուն, դեկավարներուն, եւ կրթական մշակներուն որոնք սիրալոյս շարունակեցին հիմնադիրներուն առաքելութիւնը եւ անմնացորդ փոխանցեցին իրենց ողջ գիտելիքները ամենայն բարեխղճութեամբ, ծնողական գուրգուրանքով եւ մշակի կոչումով, որ պատասխարուի հայ որբուկը որպէս անցեակի գոյութեան երաշխիքը եւ ապագայի յարատեւութեան լծակներէն մէկը:

Գեղարուեստական յայտագրի բացումը կատարող օր. Դանիա Սաքալի իր քաղցրահնչիւն ձայնով դիւթեց ու հրապուրեց հանդիսատեսը «Կիրիկիա» եւ «Երեւան էրէքունի» երգերով, արժանանալով անոնց ծափողոյներուն եւ կիրիկեանցի կիրիկեանցի ուղղուած գնահատականի ու հիաց-

90ամեայ դուռն ալեհեր՝ Բայց պատահի, իմ կիրիկեան... Ծնունդդ քու ես չեմ ճանցնար, Բայց կ'ըսեմ քե՛ր յոյսի վտիտ առու մ'էիր, Յոյսէմ այրի, վշտով յղի, իմ կիրիկեան:

մունքի բացականչութիւններուն:

Յայտագրի յաջորդ օղակն էր օր. Վարդուհի Չաթախչեանի համադրութեամբ ասմունքի կտորներ, որոնք հիանալի էին, որովհետեւ կիրիկեանցի շունչով ու գրիչով արտացոլած հարազատ արտայայտութիւնն էր որ հնչեց կիրիկեանցիներու շրթներուն վրայ, ներթափանցելով հանդիսատեսի հոգւոյն օր. Ջանի Նազարեան եւ օր. Դանիա Պէգճեանի միջոցաւ, վերանորոգելով անոնց սէրն ու յարգանքը իրենց սիրելի վարժարանին կիրիկեանին:

Լոս Անճելոսի կիրիկեանցիները, հեռաւոր ափերէն տեսաճողովակով մը պատուոյ հիւրերը եղան այս հանդիսութեան: Տիար Յարութիւն Տէրվիշօղլեան, իր սրտաբուխ մաղթանքները տալէ ետք, ներկայացուց հանդիսատեսին Արեւմտեան Ամերիկայի Ս.Գ.Հ.Կ - ի վարիչ Մարմնի փոխ ատենապետ տիար Գաբրիէլ Մոլոյեան եւ կիրիկեան կրթական միութեան ատենապետ տիար Վարդան Եղսոյեանը, որոնք շնորհաւորեցին ներկաները այս առթիւ, երախտագիտական խօսք ուղղելով, բոլոր այն մարմիններուն որոնք զօրավիգ կանգնած են ու կը կանգնին, այս հաստատութեան վերելքին ու բարգաւաճման խոստանալով Ամերիկայի կիրիկեանցիներուն նիւթական ու բարոյական օժանդակութիւնը հողաչերտ մը գնելու յետագայ ծրագրին, իրականացնելու նպատակաւ հիմնադիրներու ու անոնց շարաւիղը հանդիսացող կիրիկեանցիներու երազը: Երազները երազ չեն մնար, երբ կայ զանոնք իրականացնող աննկուն կամք, ձգտում եւ կիրիկեանցի նուիրուածութիւն:

Բնականաբար դասական երաժշտութիւնը իր տեղը պիտի ունենար այս հիանալի առթիւն, լարային քառակը դասական կտորներով ողողեց ներկաներուն սիրտն ու հոգին երաժշտական նուրբ զգացումներով:

Կիրիկեան կրթօժախը 90 տարիներու ընդմէջէն հայկապատմական շնորհած է յաջողակ հազարաւոր շրջանաւարտներ, որոնք պատիւ ու պարծանք բերած են կիրիկեանին, անոնցմէ էր բժշ. Ջատիկ Պալպանեան, որ բեմ բարձրացաւ փոխանձելու օրուան խորհուրդը, անդրադառնալով կիրիկ-

եանի ոսկետառերով արձանագրուած անցեակի ու ներկայի փառաւոր պատմութեան ու բարձր մակարդակ ունենալու հանգամանքին, որուն կենդանի ապացուցն էր ինքը՝ օրուայ բանախօսը որպէս պատուաբեր անձ իր ծնողքին, շրջանակին ու համայն հայկապատմական:

Բժ. Ջատիկ Պալպանեանը իր երախտագիտութեան զգացումները յայտնեց տարիներ շարունակ դպրոցը վառ պահող ու ամպիրներու վրայ մոմի պէս հալող տնօրէններուն խոնարհելով անոնց սրբազան նուիրումին դիմաց ու նշեց զանոնք պաշտօնավարութեան յաջողականութեամբ: Աբրահամ Սէրայտարեան, Մատթէոս Երէցեան, Գէորգ Պէպոյեան, Սարգիս Թաշճեան, Կարապետ Մուղամեան, Սեդրակ Զաւէն, Երուանդ Պապայեան, Ռուբէն Տիրարեան, Ազնիւ Քիրիշեան եւ Անի Մելքոնեան:

Այնուհետեւ սալիկի վրայ ցուցադրուեցաւ վերջին շրջանին տեղի ունեցած վերանորոգութիւնները կիրիկեանի մանկապարտէզի շարժիչներն ու բացման արարողութիւնը նորակառուց սարքաւորուած արանին, որ եղաւ ապացուցած

վկայութիւն այն մեծ աշխատանքին որ իրագործեց նորակազմ հոգաբարձութիւնը շինարարական կազմը կարճ ժամանակաշրջանի մը մէջ:

Հիանալի էր Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախուժի պարմանուհիներուն հեղաճկուն նագպարը խորհրդաւոր այն մոմերով որ լուսաւորեցին բեմն ու հանդիսատեսի սրտերը:

Ետքը օր. Վարդուհի Չաթախչեան բեմ հրաւիրեց կիրիկեանի տնօրէնուհին՝ տիկին Անի Մելքոնեան Պոյաճեան, որ իր խօսքին մէջ գնահատեց այս դպրոցը կանգուն պահող կրթական մշակները, որոնք անսակարկ նուիրումով կը գործեն այս վարժարանի վերելքին, մեծ բծախնդրութիւն ցուցաբերելով կիրիկեանցի աշակերտի դաստիարակութեան եւ ուսուցման:

Օր. Յամիկ Գուլումճեան վերջ տուաւ գեղարուեստական յայտագրի, արաբերէն հայրենասիրական ոգեւորիչ երգերով, հիանալի կատարողութեամբ:

Ապա ցուցադրուեցաւ վերջին տեսաճողովակը որ կը բովանդակէր Ամերիկայի կիրիկեան Բարեգործական Միութեան կազմակերպած կիրիկեանի 90 ամեակին նուիրուած հանդիսութեանէն բաժիններ, ինչպէս նաեւ ատենապետ Տիգրան Սարգիսեանի խօսքը: Կիրիկեանցի-

Շար.ք էջ 19

Նոր Սերունդ Մշակութային Միութիւն  
Թէրէեան Մշակութային Միութիւն  
Համազգային Մշակութային Ընկերակցութիւն  
Իրանահայ Միութիւն  
Պոլսահայ Միութիւն

Սիրով կը հրատարակենք ձեզ

## ԸԱՅ ՏՊԱԳԻՐ ԳԻՐԵԻ 500-ԱՄԵԱԿԻ ԸԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Գլխաւոր Բանախօսներ՝  
**Հ. ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԳ. ԵԱՐՏՄԵԱՆ**  
«Պատմական Ակնարկ եւ Արժեւորում  
Հայկական Տպագրութեան - 1512-էն 1720ականները»  
**ԳՈԿՏ. ՍԵՊՈՒՀ ԱՍԼԱՆԵԱՆ**  
«Աննիպիկէն՝ Մայրաւս -  
Միջբարեկամներու Տպագրական Զանցը»

Գեղարուեստական յայտագիրով կը հրատարակենք  
Նուագ - Երկնային Համոյք՝  
**ՍԱԼԹԻ, Սրինգ  
ՍՕՍԻ, Տախդ  
Ասմունք՝**  
**ՄԱՐԱԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ  
ԱՎԱՐԳ ՌԻԶՈՒՆԵԱՆ**  
Երգչախմբային Կատարումներ՝  
**ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԸ  
ՄԻՔԱՅԷԼ ԱԲԵՏԻՍԵԱՆ, Խորալար**  
Կը ցուցադրուին հնատիպ հայերէն գիրքեր  
եւ հայերէն տատերու նմուշներ  
**Կիրակի, 10 Յունիս 2012 - կ.ե. 5:00-ին**  
**ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ**  
117 S. Louise Street, Glendale, California 91205  
**ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ**

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծախառնակներու եւ մանուկներու Քայրօգիտութիւն բաժնում:  
Գլխաւոր, վարչ, մէջքի, յոգային եւ սկզբնային ցաւեր:  
Բնորոշարժի վթարի ինտենսիւքով պատասխան  
վեճատուածքներու բուժում:  
Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

# ԿԻԼԻԿԵԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ 90-ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ



## Շարունակում էք 6-էն

ներէ կազմուած այս միութիւնը ինչպէս միշտ իր նիւթական մեծ օժանդակութիւնը բերելով յանձն առաւ կիլիկեան նախակրթարանի վերանորոգման իրագործման յետագայ ծրագիրը, ոչ թէ եւ եռանդ ներշնչելով ծրագիրը նախաձեռնող կիլիկեանի նորակազմ հոգաբարձութեան:

Պարգեւաբաշխութեան հոգեշարժ ու հոգեպարար վաչրկեանները այս փառունակ հանդիսութեան վերջին հանգրուանն էր: Կիլիկեանը երախտագիտական պարտք ունէր մատուցանելիք անցեալի նուիրեալ հոգաբարձուներուն եւ 90 ամեայ կիլիկեան հաստատութենէն ներս առնուազն 15 տարի ծառայութիւն ունեցող կրթական մշակներու: Հանդիսա-

տեսի ծափերով բեմահարթակ բարձրացող պարգեւատրուողները ստացան իրենց չատկացուած գնահատագրերը, յարգանքով ու մեծարանքով կը նշենք անոնց անունները:

**ՆԱԽԿԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԷՆ.** Վարուժան Սերայտարեան, Գէորգ Համամճեան, Վարուժան Հաճինարինեան, Յակոբ Ապէճեան, Յարութիւն, Յովիկ Իսկէնեան, Գէորգ Իշխանեան, ձորճ Գուլումճեան, Գէորգ Ալվազեան, օր. Անահիտ Զմանեան, Սարգիս Պալապանեան, Արշակ Գաճանակեան, Յարութիւն Զերենցեան, Յովհաննէս Մարտիկեան ֆ:

**ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿՆԵՐ:** Տիկ Արմէնուհի Ֆէրմանեան, Տիկ Ազնիւ քիրիշեան, օր ժանէթ Շաքըուր, օր Թագուհի Աթոգեան, օր Մարի Գուլեան, պրն.Յովհան-

նէս Զուլճեան, օր Անի Մարսէլեան, օր. Սալբի Գասպարեան, տիկ. Լենա Յարութիւնեան, տիկ. Արաքսի Թիւթիւնճեան, օր Մատլէն Մելքիսէթեան, օր. Վարդուհի Զաթալմաշեան, օր. Նորա Փիլիպպոսեան, տիկ. Արաքսի Տիրարեան, տիկ. Մարալ Քիւփեյեան, տիկ. Մարիէթ Յարութիւնեան, օր. Մովինար ձղլեան, տիկ. Յասմիկ Հեճինեան, Օր.Նանտր Հէքիմեան, օր. Մակի Զուպրիկեան, տիկ. Նորա Արաքիլիբեան: Փառք ու պատիւ բոլոր հայ կրթական մշակներուն որոնց անունը քանդակուած պիտի մնայ իւրաքանչիւր կիլիկեանցիի հոգւոյն ու սրտին մէջ:


Օրուայ հանդիսութեան պատուական հիւրն էր Դամասկոսի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանը որ նախագահեց այս մեծարանքի

երեկոն որպէս կիլիկեանի պատուարժան շրջանաւարտներէն մին: Փոխադարձ սիրոյ յարգանքի ու գոհուկահաւթեան զգացումները պատած էր սրբազանն, ու օրուայ պարգեւատրուող ուսուցիչներու սիրտը, որոնք բախտն ու պատիւը ունեցան պատուագիր ստանալ իրենց աշակերտած ու դաստիարակած մեծադիրք, բայց մեծասիրտ ու համեստ Տէր Արմաշ սրբազան Նալպանտեանի ձեռամբ: Գերաշնորհ սրբազան հայրը իր պատգամը տալէ ետք կիլիկեանի մատողաշ սերունդին, պահպանիչով փակեց այս պանծալի յրբեկինականը:

Փառք ու պատիւ բեզ սիրելի կիլիկեան ուսումնաբույր սրբազան տաճար, լոյսի ու մտքի փարոս, երթող յաւերժ ու դալար դէպի լուսափայլ 100 ամեակներ:

### ԳՐԱՔՆԱԴԱՏ ԳՐԻԳՈՐ ՊՐԼՏԵԱՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԵԶ

UCLA-ի Նարեկացիի Անուան Հայագիտութեան Ամպիրոնի Բարեկամներու Ընկերակցութիւնը ուրախութեամբ կը ծանուցէ ժամանումը բանաստեղծ, վիպագիր եւ գրաքննադատ Գրիգոր Պրլտեանի՝ Փարիզէն, որպէս պատուաւոր հիւրը Ընկերակցութեան: Դոկտ. Գրիգոր Պրլտեան պիտի ստանայ Ընկերակցութեան «Գրիգոր Նարեկացի»ի անուան շքանշանը՝ հայ գրականութեան մէջ իր ունեցած իրազորածուծներուն համար: «Գրիգոր Նարեկացի»ի անուան շքանշանով կը պարգևատրուին այն անհատները, որոնք զգալիօրէն հարստացուցած են հայ մշակոյթի գանձարանը իրենց մասնագիտական մարզերուն մէջ կատարած ստեղծագործութիւններուն եւ ուսումնասիրութիւններուն շնորհիւ: Այս շքանշանին արժանացողներէն եղած են Մայքըլ Յակոբեան (Քալիֆորնիա), Պերճ Զէյթունցեան (Հայաստան), Նինա Գարսոյեան (Նիւ Եորք), Արուսեակ Սահակեան (Հայաստան), Անտոնիա Արսլան (Իտալիա), Վաչէ Պարսումեան (Քալիֆորնիա): Դոկտ. Գ. Պրլտեանի շքանշանի տուուածութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Պոլսահայ Մշակութային Միութեան կեդրոնին մէջ (19726 Sherman Way, Winnetka, CA 91308), Կիրակի, Ապրիլ 29-ին, երեկոյեան ժամը 6:00-էն սկսեալ: Զեռնարկին ընթացքին Փրոֆ. Գ. Պրլտեանը պիտի ներկայացուի UCLA-ի արեւմտահայերէնի դասախօս եւ Գրիգոր Նարեկացիի մասնագէտ Դոկտ. Յակոբ Կիւլիլեանի կողմէ:



Դոկտ. Պրլտեան ազնուօրէն համաձայնած է երկարաձգել իր կեցութիւնը եւ տալ դասախօսութիւն մը, հայերէն լեզուով, Երեքշաբթի, Մայիս 1-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Կլենտէյլի Հանրային Գրադարանին մէջ: Դասախօսութեան նիւթը պիտի ըլլայ «Ժամանակակից Գրականութեան Հարցեր», յատկապէս ծանրանալով այսօրուան հայ գրականութեան խնդիրներուն վրայ: Ան տիրացած է երկու դոկտորական գիտական աստիճաններու Սորպոնի համալսարանին՝ մէկը Իմաստասիրութեան մէջ (1975), միւսը՝ Համեմատական Գրականութեան մէջ (1995): Պրլտեանի շքեղ հաւաքածոն կ'ընդգրկէ աւելի քան երեսուն հատոր՝ բաղկացած բանաստեղծական ժողովածուներէ, վէպերէ, հայերէն եւ ֆրանսերէն գրաքննադատական աշխատասիրութիւններէ, քանի մը հատոր հայերէն ֆրանսերէն թարգմանութիւններէ եւ քանի մը տասնեակ յօդուածներէ: Ան լայնօրէն աշխատակցած է նաեւ հայ մամու-

լին: Իր բանաստեղծութիւններու առաջին ժողովածուն հրատարակուած է 1976-ին «Տեղագրութիւն Քանդուղի Քաղաքի մը Համար», որ անմիջապէս ուշադրութիւնը գրաւեց առհասարակ գրականութիւն եւ բանաստեղծութիւն սիրողներու: Այնուհետեւ լոյսին կու գայ «Հատուածներ «Սենեակ»-ի Մասին» 1978-ին եւ երկրորդ «Objets et debris»-ն յնչ տարին: Պրլտեան իր առաջին վէպը կը հրատարակէ 1997-ին «Սեմեր» վերնագրով, որուն կը յաջորդեն նաեւ ուրիշներ: Իր գեղարուեստական ստեղծագործութեանց զուգահեռ ան կը հրատարակէ արժէքաւոր ուսումնասիրութիւններ նուիրուած Գրիգոր Նարեկացիին, Դանիէլ Վարուժանին, հայկական ապագայապաշտութեան եւ այլ նիւթերու: Այժմ ընթացքի մէջ է իր ուսումնասիրութիւնը նուիրուած հայկական խորհրդապաշտութեան: Պրլտեան 2001-ին հրատարակած է նաեւ Ֆրանսահայ գրականութեան նուիրուած «Ֆրանսահայ Գրականութեան Յիսուն Ծարիները» (Cinquante ans de litterature armenienne en France):

Դոկտ. Գրիգոր Պրլտեան ծնած է Պէյրութ, ուր ստացած է իր վաղ շրջանի կրթութիւնը՝ յաճախելով տեղուց Նշան Փալանճեան ձեմարանը: Կարճ տեւումը (1972-1973) եղած է դասախօս Պէյրութի Հայկական Քոլէճին ներս (այժմ համալսարան) եւ անցած է Լիոն, ուր 1987-2006 դասաւանդած է Հայ հին գրականութիւն, գրաբար եւ աստուածաբանութիւն տեղուց Աստուածաբանական Հաստատութեան մէջ: 1978-էն մինչեւ օրս Հայոց լեզուի եւ գրականութեան դասախօս է Փարիզի Արեւելեան Լեզուներու եւ Քաղաքակրթութեանց Ազգային Հաստատութեան մէջ: Դոկտ. Գ. Պրլտեան ծանցեցուած հեղինակութիւն է ոչ միայն Ֆրանսայի, Հայաստանի, Լիբանանի մէջ, բայց նաեւ Միացեալ Նահանգներու մէջ:

### ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՄԵՌԵԼՆԵՐՈՒՄ ԻՐԻԵՒ ԽԱՉ ԵՍ ԱՅՍ ԾԱՌԸ ՏՆԿԵՑԻ



#### ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Հայ Քոյրերու Վարժարանի Ապրիլ ամսուան Յեղասպանութեան 97-ամեակի նուիրուած միջոցառումներու կարգին հետաքրքրական ձեռնարկ մըն էր միջնակարգի աշակերտներու հանդիպումը տիրար Զաւէն Խանճեանի հետ:

Տնօրէնութեան առաջարկով եւ հայկական բաժանմունքի կազմակերպութեամբ եւ գործադրութեամբ այս օգտաշատ հանդիպում գորցը տեղի ունեցաւ Երկուշաբթի, Ապրիլ 16ի յետ միջօրէին վարժարանի Դանիէլեան սրահին մէջ, ուր աշակերտները առիթը ունեցան դիտելու Խանճեանի պատմական այցելութիւնը արեւմտահայաստանի Աղըն գիւղի մէջ գտնուող իր հօրենական տան: Անոնք բաժնեցին սիրուեալ հայու զգացումները, երբ կարօտաբար հայր կը միանար իր տարիներով երագած հօրը տունին, հաղորդուեցան հայրենի աշխարհի մէջ լքուած յափշտակուած տան մը պատմութեամբ, եւ հարստացաւ անոնց երեւակայութիւնը, բաժնելով «Այս տունը իմ է թէ քու կը» գիրքին հեղինակ՝ Խանճեանի անկրկնելի եւ հազուագիւտ փորձառութիւնը:

Հանդիպման սկիզբը բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Տիկ. Լինտա Գանտիլեան, ներկայացուց օրուան հիւրը՝ Տիրար Զաւէն Խանճեան, որ ազգային, հասարակական գործիչ, հեղինակ եւ գործօն ներկայութիւն է գաղութի հայկական թէ՛ ամերիկեան շրջանակներէ ներս: Ան փոքրիկ ներածականով մը կեդրոնացուց աշակերտներու ուշադրութիւնը պահանջատիրու-

թեան գաղափարին վրայ, անոնց պատմելով թէ ինչպէս գաղթէն ճողոպրած սերունդը իր հայրենի տան բանալիները կը պահէր յուսալով տունդարձը, բայց անոնք իրենց հետ թաղեցին այդ «բանալիները» բայց տունդարձի յոյսը մնաց միշտ կենդանի փոխանցուելով սերունդէ սերունդ: Ծրագիրը սկսաւ վեցերորդ դասարանի աշակերտներու Սարմէնի «Հայրենի Տուն» արտասանութեան մեկնաբանութեամբ, մինչ դասախօսը «Քելէ Լաօ» երգի ունկնդրութեամբ աշակերտութիւնը մտովին կը փոխադրէր դէպի «Երկիր»՝ բացատրելով երգի բառերու ընդմէջէն տունի գաղափարը, հայրենիքի գաղափարը, ընդհանրապէս ցեղապանութիւնը եւ մասնաւորապէս հայկական ցեղասպանութիւնը եւ անոր տարբերութիւնը իրեն նմաններէն, ապա ցուցադրուեցաւ ուխտագնացութիւնը Խանճեան խումբին դէպի արեւմտահայաստան եւ յատկապէս իր պապեանական տունը եւ նոր տանտիրոջ նուիրած իր պապերու աճիւններուն հետ միաձուլելու սրբազան մտածումէն մղուած, կրկնելով՝ Զաւէն Սիւրմէլեանի բանաստեղծութիւնը՝ «Մեռելներուս իբրեւ խաչ, ես այս ծառը տնկեցի»:

Յուզիչ էր պատկերը, աշակերտները քար լուծեցան մէջ կը հետեւէին այս հազուադէպ պատահող իրականութեան, մինչ ութերորդ դասարանի աշակերտները կ'արտասանէին Զաւէն Սիւրմէլեանի աղօթք դարձած «Ծառը» արտասանութիւնը:

Մար.ք էջ 26

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909



**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---



**A.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաժողտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.



**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits



## 90 ՏԱՐԻ ԱՌԱՋ -ԴԵԿՏԵՄԲԵՐ 1921- ԿԻԼԻԿԻՈՅ ՊԱՐՊՈՒՄԸ ԿԻԼԻԿԻՈՅ Տ.Տ. ՍԱՀԱԿ Բ ԽԱՊԱՅԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՅՐԱԺԵՇՏԸ ԿԻԼԻԿԻՈՅ

### ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա.Ի. ՔԶՆԵՍ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

#### Յրաժեշտը

Երջանկայիշատակ Տ.Տ. Սահակ Բ Կիլիկիոյ Կաթողիկոսը 1920 թուին աքսորէն Կիլիկիա վերադարձաւ այն յոյսով որ պիտի վերակերտէր իր Աթոռը: Լման տարի մը մնաց Ատանա, 1920 Նոյեմբերէն 1921 Դեկտեմբեր, եւ ապա անդարձ մեկնեցաւ Կիլիկիայէն, միշտ մնալով իր ժողովուրդին գլուխը երբ արդէն 72 տարիքը լրացուցած էր: Սահակ Հայրապետ զնաց բնակութիւն գտնելու Հալէպ, իր կարեւոր թեմերէն մէկուն մէջ, ուր վտարանդի հասած էին նաեւ Կիլիկեցիք: Հայրութենէ պարպուած էին Սիսը, Ատանան ու Այնթապը, Մարաշն ու Զէյթունը: Վերապրողներ եղած էին գաղթական, անտէր, անտունի՝ ցրուած Պաղեստին, Սիւրիա, Լիբանան եւ Յունաստան, լքուած իրենց բախտին, իրենց ձեռքերով կերտելու համար իրենց տունը:

#### Ի՞նչ էր Նախընթացը

Կիլիկիոյ տարաբախտ պարպումին նախընթացը եւ պատճառը Եւրոպական դաւաճանող քաղաքականութիւնն էր: Առաջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ 1916 Մայիս 16-ին գաղտնի համաձայնութիւն մը կնքուեցաւ Օսմանեան Թուրքիոյ որոշ տիրոջթները բաժնելու մասին, եւ այդ համաձայնագիրը ընդունուեցաւ Ռուսիոյ Կայսեր կողմէ եւ ստորագրուեցաւ Լոնտոնի մէջ:

Ըստ տուեալ պայմաններուն Ֆրանսայի պիտի յանձնուէր Կիլիկիան, նկատի ունենալով անոր ռազմավարական կարեւոր դիրքը: Հայկական Լէգէոնը գտաւ իր հովանաւորը՝ Ֆրանսան, որուն հետ հայեր պիտի կռուէին թուրքերուն դէմ եւ յաղթութեան պարագային Կիլիկիա ինքնավար պիտի դառնար եւ տրուէր հայերուն:

Ըստ այնմ, Հայկական Լէգէոնը 1918 Սեպտ. 19-ին Արարայի ճակատամարտին մասնակցեցաւ ու Ֆրանսա յաղթական դուրս եկաւ:

#### Առաջին Նշանները

Առաջին նշանները լաւ էին եւ սակայն շատ կարճատեւ: Ֆրանսա արտօնեց Հայկական գունդին մուտքը Կիլիկիա շուրջ 6000 զինեալներով, որոնք ցամաք էլան Ալեքսանտրէթ, եւ Մերսինէն մտան Կիլիկիա: 1919-ին արդէն մօտ 120,000 հայեր կ'ապրէին Կիլիկիոյ մէջ, իսկ տարի մը ետք թիւը բարձրացած էր 160,000-ի: Սահակ ֆրանսական հոգատարութիւնը լուրջ եւ մնացուն միջոցներ ձեռք չառաւ հայերու անվտանգութիւնը ապահովող: Ֆրանսայի հաւանութեամբ տեղ տեղ թուրք պաշտօնատարներ սկսան իշխանութեան գլուխ անցնել, մինչ անդին միեւնոյն ատեն Քեմալական շարժումը կը սողոսկէր Կիլիկիայէն ետք Իզմիրի եւ Յունական ծովերուն տիրանալու վճռականութեամբ: Սակայն անոնց համար Կիլիկիան առաջ կուգար:

#### Կիլիկիոյ

#### Ինքնապաշտպանութիւնը

Հայեր իսկույն ինքնապաշտպանութեան խիզախ փորձերու ձեռնամուխ եղան որոնք սակայն շուտով թուրքերուն ձեռքը ինկան՝ Չարդի եւ կոտորածի մատուցելով: Այսպէս, 1920-ին Մարաշ դիմադրեց 20 օրեր եւ կորսնցուց 11,000 հայրդիներ: Մնացած 8,000-ը գաղթեց Սիւրիա: Հաճըն պաշարուեցաւ 7 ամիս եւ հերոսաբար դիմադրեց թշնամիին, եւ սակայն 1920 Հոկտեմբեր 15-ին յանձնուեցաւ անոր: Հաճնոյ բազմաթիւ հայրութենէն միայն 380 զինուորներ կրցան ճեղքել թշնամիին բանակը եւ ազատել: Ո՛ւր էին Ֆրանսայիք: Ինչի՞ ծառայեց անոնց դաշինքն ու համաձայնութիւնը: Անպատիւ քաղաքականութեան, սուտի եւ կեղծիքի զոհ գացին հայրդիք:

Մուսթաֆա Քեմալ 1920-ի Ապրիլ 1-ին պաշարեց Այնթապը, եւ 15 օրուան հերոսական ինքնապաշտպանութենէ ետք 18,000 այնթապցի հայեր փրկուեցան կոտորածէ ու գաղթեցին Հալէպ: 1919-ին Զէյթուն վերադարձած էին 1058 տարագիր հայեր որոնք դժբախտ վախճան մը ունեցան, եւ այս ձեւով Կիլիկիոյ հայութիւնը անգամ մը եւս զոհ գնաց միջազգային քաղաքականութեան, խաբուելով Ֆրանսային եւ Անգլիային, որոնք աւելի պէտք ունէին թուրքին քան թէ հայուն:

Աւելին եւ դատապարտելին եղաւ այն որ Ֆրանսա ո՛չ միայն չկատարեց իր կնքած դաշինքը, այլեւ 1921 Հոկտեմբեր 20-ին Անգարայի դաշնագրով Կիլիկիան յանձնեց Թուրքիոյ:

#### Սահակ Բ Կաթողիկոսի Վերջին Ծիզը

Նոյն այդ տարիներուն Սահակ Բ Խապայեան Կաթողիկոս կը ջանար Ատանա իր հօտին գլուխը մնալ, ուրկէ կը վարէր իր թեմական գործերը իր կողքին ունենալով Եղիշէ Կարոյեան եւ Պետրոս Սարաճեան եպիսկոպոսները, յուսալով որ հոն պիտի մնար ու հաստատուէր: Սակայն վերոյիշեալ արագընթաց եւ դաւաճան դէպքերը խորապէս յուսալքեցին ձեռունի Հայրապետը, որ կրկին կը ստիպուէր թողուլ Կիլիկիան եւ դիւանագիտական այցի երթալ Փարիզ՝ 1920 Մարտ 13-ին, տեսակցելու Ֆրանսայի նախագահին ու վարչապետին հետ:

Կաթողիկոսը ձեռնունայն Փարիզէն Պէյրութ մեկնեցաւ, ուր Ֆրանսայի Բարձր Գործերին հետ բանակցեցաւ ու ապա վերադարձաւ Ատանա Նոյեմբերի 1-ին՝ ութ ամիս բացակայելէ ետք: Զինք կը փոխարինէր Եղիշէ Եպս. Կարոյեան որպէս թեմի առաջնորդը: Սահակ Կաթողիկոս եւ եպիսկոպոսներ Ատանա մնացին լման տարի մը եւս եւ Կիլիկիոյ վերջնական պարպումը տեսնելով իրենք եւս իրենց հօտին հետ գաղթեցին Հալէպ 1921 Դեկտեմբերին: Այս

#### անգամ վերջնականապէս:

#### Արթուն եւ Անվիատ Յայրապետը

Հակառակ յուսահատութեանց եւ յուսախաբուութեանց, դաւաճանութեանց եւ անարդարութեանց Տ.Տ. Սահակ Բ Խապայեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը ընթացաւ յառաջ՝ խաչը ձեռքին եւ ձեռքը մաճին վրայ: Սիսի պատմական Աթոռին վերջին Գահակալը եղաւ ան: Իր կեանքն ու երկարատեւ գահակալութիւնը վերջալոյս չբերին իր ալեհեր կեանքին: Ընդհակառակը, արշալոյս մը բացին իր տոկուն կենցաղին եւ անխախտ հաւատքին շնորհիւ: Սահակ Կաթողիկոս տեսաւ վերընձիւղումը իր Աթոռին՝ ի՛ր ձեռքով, եւ ո՛չ թէ օտարին աջակցութեամբ:


Թէեւ իր պատմական Աթոռէն հեռու, սակայն ապահով Լիբանանի Անթիլիաս աւանին մէջ Սահակ Կաթողիկոս ինք անձամբ հաստատեց Կիլիկիոյ Աթոռը 1930 թուին, իրեն աջակից ունեցաւ Տ.Տ. Բաբգէն Ա Կիւլէսէրեան Աթոռակից Կաթողիկոսը որ կարճ ժամանակի ընթացքին նոր ստացուած թեմերը կազմակերպեց, Դպրեվանքին հիմը դրաւ, հրաւիրեց Շահէ Եպս. Գասպարանը որպէս Տեսուչ, զինք եպիսկոպոսացուց, աշակերտներ հասցուց եւ սակայն կանուխ վախճանեցաւ՝ ծերունի Սահակ Հայրապետէն երեք տարի առաջ՝ 1936 թուին:

Սահակ Բ Կաթողիկոս սրտաբեկ եւ սակայն խոհուն, հիմքը դրաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին, եւ առանց տեսնելու անոր կառուցումը վախճանեցաւ 1939 թուին խոր ծերութեան մէջ, 90 տարիքը լրացուցած եւ 36 տարիներ գահակալելէ ետք: Իր ֆոխանորդը եւ ձեռնասունը, Հաճնոյ երախտարժան Առաջնորդը՝ Պետրոս Արքեպս. Սարաճեան կառուցանել տուաւ Մայր Տաճարն ու Նահատակաց Մատուռը, եւ արժանի կերպով եղաւ յաջորդ Կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիոյ որպէս Պետրոս Ա Հայրապետ:

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՉԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabashian**  
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104  
**626-354-5924 • vamedia@yahoo.com**

## Եթէ ձեր զաւակը....

- ▶ 10 - 18 տարեկան է...
- ▶ Գաղտնաբերել իր նախասիրած մարզանքն է...
- ▶ Կ'ուզէ մարզովի մասնագիտակաւորուիլ...
- ▶ Կ'ուզի Կ'ընտելալ թաղաքի քաջակայքը...

## Ուրեմն....

Ձեր արձանագրեցիք Ն.Մ.Մ.-ին կազմին նեռաւանելով

Avo Mazmanian (818) 913-9311  
Harry Unell (818) 281-3868  
www.homenmen.org

Please call for information and registration to the Homenmen Basketball teams

## If your child is....

- ▶ 10 - 18 years old...
- ▶ Basketball is his favorite sport...
- ▶ Would like to be trained by a professional coach...
- ▶ Lives in the Glendale or nearby areas...

**Then register him to his age-appropriate team**









